

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am



Ամենահանգուցայինը Սյունիքի երթուղիների վերահսկողության խնդիրն է

Radar Armenia-ի զրուցակիցը միջազգայնագետ Շահան Գանտահարյանն է:

Իրանն ու Պակիստանը փոխադարձ հարվածներ են հասցնում: Այս իրավիճակը որքանով է ռիսկային Հարավային Կովկասի և, հատկապես, Հայաստանի համար:

Մեծ հաշվով Իրանը զսպոռ գործոն է Արդրբեյջանի նկրտումներին, իսկ Պակիստանը անվերապահ գորակցում է Արդրբեյջանին: Երկու երկրների միջև գրանցված բախումները կարող են իրենց շարունակությունն ունենալ նույն տարողությամբ: Կլիմայի թիրախային և չեն վերաճի լայնամասշտաբի: Գետնի վրա

տեսանելի է Իրանի փոկային ապամեկուսացումը: Արևմուտքից հետ գործակցության ուղիները հարթվում են, թեկուզ՝ դանդաղ:

– **Ինչպիսի՞ գարգացումներ եք կանխորոշում Իրան-Պակիստան լարվածության մեջ:**

– Թիրախային, բայց ոչ լայնածավալ: Կաշխատեն այն չընդլայնելու զսպիչ գործոններ: Տարածաշրջանը վերահսկելի բազմակետային պատերազմների հունով է գնում՝ առանց ամբողջովին տարածաշրջանային վերաճելու:

– **Նաև որոշակի լարվածություն կա՞ կապված եմենի հուլիսների հետ, երբ ԱՄՆ-ն ու Բրիտանիան հարվածներ հասցրին: Նման լարվածությունն ինչի՞ կհանգեցնի:**

– Նույնը՝ այս դեպքում: Կարմիր ծովի ռազմավարական անցքերի վերահսկողության

հակամարտությունը այս տեսքով շարունակվելու է: Բայց այն ուղղակի կապ ունի Իսրայելի նկատմամբ սեղմվող օդակների հետ:

– **Սերգեյ Լավրովը թեև հերքեց, որ եռակողմ հայտարարության մեջ «Չանգեզուրի միջանցքի» վերաբերյալ դրույթ կա, բայց հայտարարեց, որ Հայաստանն է այժմ դժվար իրականացնում ճանապարհի բացումը Սյունիքով այնպես, ինչպես գրված է եռակողմ հայտարարությամբ: Նրա խոսքով՝ Հայաստանն է նոր պահանջներ առաջադրում՝ չցանկանալով, որ այնտեղ ռուս սահմանապահները կանգնեն: Ինչպե՞ս եք մեկնաբանում Լավրովի այս հայտարարությունները:**

– Պարզ ասվում է, որ Մոսկվան և Բաքուն համաձայնել են Նոյեմբեր 9-ի հայտարարությանը՝ էջ 2

Արցախի ժողովրդի հավաքական հայրենադարձության և իրավունքների պաշտպանության նպատակով հանձնախումբ է ստեղծվել

Արցախի հիմնական քաղաքական ուժերի հետ համագործակցությամբ Արցախի ժողովրդի հավաքական հայրենադարձության և հիմնարար այլ իրավունքների պաշտպանության նպատակին կոչված հանձնախումբն արդեն ձևավորված է. այդ մասին տեղեկացրել է նախկին արտգործնախարար Վարդան Օսկանյանը:

Օսկանյանը նշել է, որ համաձայնել է հանձնախումբի անդամների առաջարկությունը՝ համակարգել որա աշխատանքները:
«Առաջիկայում, երբ ամբողջանա հանձ-

նախմբի կազմը, կիրառարակվեն մյուս անդամների անունները, ինչպես նաև մանրամասներ անելիքների մասին: Այս պահին կարող եմ ասել, որ Հանձնախումբի գլխավոր խնդիրը լինելու է միջազգային երաշխիքներով Արցախի ժողովրդի հավաքական հայրենադարձության և իր հայրենիքում ապահով, անվտանգ ու արժանապատիվ ապրելու իրավունքի պաշտպանությունը և հետապնդումը», – գրել է նախկին արտգործնախարարը:
Վարդան Օսկանյանի համոզմամբ՝ Արցախի ժողովրդի հավաքական հայրենադարձության և իր հայրենիքում ապահով, անվտանգ ու արժանապատիվ ապրելու իրա-



Վլոնքի իրականացումը կարող է տևական ու կայուն խաղաղություն բերել:
18 ՀՈՒՆՎԱՐԻ 2024 Թ.

Պատերազմը կազդուրվածի, առողջի ցանկությունն է, ինչպես խաղաղությունը թույլի բաղձանքն է, հոգնածի երազը:

Գարեգին Լժնեհ

Ըստ ՀՀ վարչապետի՝ Հայաստանը կարիք ունի նոր Սահմանադրության

Աշխարհը փոխվում է, և անխուսափելիորեն փոխվելու է նաև մեր տարածաշրջանը, փոխվելու է նաև և փոխվում է նաև Հայաստանի Հանրապետությունը. հունվարի 18-ին Արդարադատության նախարարությունում հայտարարել է վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Այս փոփոխությանը կարելի է ամենատարբեր կերպ վերաբերել: Բայց՝ անկախ նրանից, թե էվոլյուցիային ինչպես կվերաբերենք, այն տեղի է ունենում: Հետևաբար՝ մեր դիրքորոշումը և մոտեցումը պետք է լինի ոչ թե այն, որ այդ էվոլյուցիան կանգնեցնենք, սա ինքնին անտրամաբանական է, որովհետև էվոլյուցիան կանգնեցնելով՝ մենք դեգրադացիայի ենք հասնելու, այլ կառավարենք Հայաստանի Հանրապետության պետական շահերին համապատասխան:

Այս առումով, Արդարադատության նախարարի հետ աշխատանքային մեկ-երկու քննարկման ժամանակ ես արձանագրել եմ, որ իմ ու նաև մի շարք գործընկերների կարծիքով, և այս միտքը ես բարձրաձայնում եմ, որպեսզի այն ավելի լայն քննարկման առարկա դառնա, Հայաստանի Հանրապետությունը կարիք ունի նոր Սահմանադրության, ոչ թե Սահմանադրական փոփոխությունների, այլ նոր Սահմանադրության: Ընդ որում, ես ուզում եմ հատուկ ընդգծել, որ սովորաբար այս թեմաների մասին խոսելիս առաջին ֆոկուսը հետևյալն է՝ այս ի՞նչ կառավարման համակարգ ենք ուզում փոխել և ո՞ւմ համար:

Ուզում եմ ընդգծել, որ այդ հարցում իմ հրապարակային արտահայտած դիրքորոշումը որևէ փոփոխություն չի կրել: Ես համոզված եմ և ժամանակը՝ իհարկե, որոշ կասկածների փոկով, բայց ի վերջո ապացուցեց, որ ինձ համար գոնե և մի շարք գործընկերների համար Հայաստանի կառավարման խորհրդարանական մոդելը՝ հաշվի առնելով ժողովրդավարական մեր ձգտումները և ռազմավարությունները, ամենահարմարն է Հայաստանի Հանրապետության համար: Ընդ որում, ես հիմա ավելի եմ համոզվել, որ եթե 2020 թվականի հետպատերազմյան շրջանում մենք կառավարման հենց խորհրդարանական մոդել չունենայինք, մեր պետականության հետ կարող էր տեղի ունենալ այն, ինչ գուցե շատերն ուզում էին, որ տեղի ունենա: Խոսքը սրա մասին չէ: Ես ուզում եմ հենց այս գլխից ասել, որ կառավարման, օրինակ, ընթացիկ մոդելում քաղաքական առումով շատ բան փոխելու չկա: Դա մի փոքր մասնագիտական ոլորտի հարց է, օրինակ՝ դատաիրավական համակարգում ինչ է պետք փոխել: Նկատի ունեմ, քաղաքական առումով իմ խնդիրն ուրիշ է:

Առաջինը, որ ես կարծում եմ, որ այնուամենայնիվ, մենք ինչքան էլ այդ խնդիրը փորձենք այլ ձևերով լուծել, Հայաստանի Հանրապետությունն, ի վերջո, պետք է ունենա Սահմանադրություն, որը կասկածի տեղիք չտվող քվեարկության արդյունքներով ընդունվել է Հայաստանի Հանրապետության ժողովրդի կողմից: Սա էլ է լեգիտիմության հետ կապված, իմիջիայնոց, կարևոր շեշտադրում: Երկրորդը՝ մենք պետք է ունենանք Սահմանադրություն, որը Հայաստանի Հանրապետությունն ավելի մրցունակ և ավելի կենսունակ է դարձնում աշխարհաքաղաքական և ռեգիոնալ նոր պայմաններում:

Քանի որ երկու հարցում էլ Արդարադատության նախարարությունը, ըստ էության, շատ առանցքային դերակատարում ունի, ես ցանկացա սա ընդգծել, որպեսզի մենք
Հարունակությունը՝ էջ 2

Ըստ ՀՀ վարչապետի՝ Հայաստանը կարիք ունի Նոր Սահմանադրության

Սկզբը՝ էջ 1

առաջիկայում տրամադրվեք այսպիսի աշխատանքի: Նաև այս ուղերձը հղենք մեր իրավաբանական հանրությանը, որ իրավաբանական հանրության գործունեությունը Հայաստանի Հանրապետության արտաքին անվտանգությունն ապահովելու տեսակետից առաջիկայում ակնհայտորեն մեծանալու է: Ընդ որում, ես այդ մոտեցման արդյունավետությանը հավատում եմ և տեսնում եմ նաև ու համոզված եմ, որ պրոֆեսիոնալ մոտեցման պարագայում, իսկապես, իրավաբանական աշխատանքն այդ դիրքորոշումների լեգիտիմությունը, մեր նույնիսկ քաղաքական որոշումների լեգիտիմությունն ապահովելու առումով կարող է բավականին մեծ էֆեկտներ և արդյունքներ ունենալ»,- Լչել է վարչապետը:

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2024Թ.

Ամենահանգուցայինը Սյունիքի երթուղիների վերահսկողության խնդիրն է

Սկզբը՝ էջ 1

յան 9-րդ կետի շուրջ: Բաբուն ստանում է Նախիջևան-Ադրբեջան ցամաքային երթուղին, Մոսկվան՝ վերահսկողությունը: Համաձայնությունը, ըստ էության, Անկարա-Մոսկվա է, որովհետև այդ անցքը պետք է նաև Թուրքիային: Մոսկվան, նման կարգավիճակ ստանալով, առաջադրում է վերահսկել տարածաշրջանային-խաչմերուկային Նշանակություն ունեցող ճանապարհ: Բայց պարզ է, որ նոյեմբերյան հայտարարությունը, ըստ էության, իրականում չէր արկվել է: Սյունիքով ապաշրջափակման կետը ամենահանգուցային կետն է, որի լուծումը դեռևս պարզ չէ: Խնդիրը ոչ թե հայաստանյան անհամաձայնության պատճառով է ստեղծված, այլ՝ աշխարհաքաղաքական մրցակցության: Սյունիքը վերածվում է աշխարհաքաղաքական ուժերի ներկայացուցչության կենտրոնի, դրա համար էլ այդ անցքի վրա ռազմական ներկայության բաղադրությունը պարզ չի լուծվելու:

– **Ըստ Լավրովի՝ Ադրբեջանը պատրաստ է, որ խաղաղության պայմանագիրը կնքվի ռուսական տարածքում: Սա հիմք չէ՞ եկթաղիլու, որ Արևմուտքին դժվար թե հաջողվի կողմերին բանակցությունների սեղանի շուրջ նստեցնել՝ հաշվի առնելով Ադրբեջանի և Ռուսաստանի սինխրոն գործակցությունը:**

– Մոսկվա-Ադրբեջան հարաբերակցության կամ սինխրոն գործակցություն: Բայց Կովկասում թափանցում են նաև այլ ուժեր, որոնք արգելակում են միայն ռուսական միջնորդությունն ու երաշխավորումը: Մարդկային սկզբունքների իրականացման հիմնական արգելքը, կարծում եմ, անհամաձայնությունն էր խաղաղապահ ուժերի բաղադրության շուրջ: հիմա էլ նույն անհամաձայնությունը կա ռազմավարական ճանապարհների վերահսկողության շուրջ:

– **Իսրայել-պաղեստինյան հակամարտությունն ի՞նչ զարգացումներ կունենա: Արաբական աշխարհն առավել մեծ ներգրավում կունենա պրոցեսներում:**

– Կարծում եմ՝ ցուցիչ է Սաուդյան Արաբիայի պաշտոնական հայտարարությունը: Չեն լինի Իսրայելի հետ դիվանագիտական հարաբերություններ, եթե չլինի Պաղեստինյան պետություն: Եր Բիադին կիստեսն արաբական այլ երկրներ, որովհետև Սաուդյան Արաբիան արաբական աշխարհում եղանակ թելադրող է՝ համաարաբական առումով:

ՀԱՅԿ ՄԱԳՈՅԱՆ
24 ՀՈՒՆՎԱՐԻ 2024 Թ.



Չանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատը 2023-ին իրականացրել է ավելի քան 5 միլիարդ դրամի սոցիալական զարգացման եւ աջակցության ծրագիր

2023 թվականին «ՉՊՄԿ» ՓԲԸ-ն և «ՉՊՄԿ» բարեգործական հիմնադրամը սոցիալական աջակցության ոլորտում ընդհանուր առմամբ ներդրել են ավելի քան 5 միլիարդ ՀՀ դրամ: Ներդրումներն ուղղվել են մի շարք ռազմավարական ուղղությունների, այդ թվում՝

- Սուբվենցիոն ծրագրեր մոտ 700 միլիոն,
- Սոցիալական աջակցություն ավելի քան 1,5 միլիարդ,
- Առողջապահություն ավելի քան 500 միլիոն,
- Սոցիալական եկթաղառույցներ ավելի քան 300 միլիոն,
- Աջակցություն կրթությանը մոտ 300 միլիոն,
- Աջակցություն սպորտին մոտ 600 միլիոն,
- Պատերազմի զոհերի ընտանիքներին օգնություն ավելի քան 100 միլիոն,
- Աջակցություն արվեստին, մշակույթին մոտ 100 միլիոն,
- Բարեգործական հիմնադրամներ ավելի քան 500 միլիոն,
- Աջակցություն պետական այլ ծրագրերի ավելի քան 600 միլիոն:

Միջոցներն ուղղվել են ինչպես Կապան և Քաջարան համայնքներ, այնպես էլ Սյունիքի մարզի կարիքներին և համահանրապետական այլ ծրագրերի, այդ թվում՝

- Սուբվենցիոն ծրագրեր՝ ուղղված աջակցելու տեղի ինքնակառավարման կառույցներին իրագործելու մեծածավալ ենթակառուցվածքային ծրագրեր Կապան և Քաջարան համայնքներում,
- Սոցիալական աջակցության ծրագրեր, որոնք ներառում են անհատներին կամ ընտանիքներին ցուցաբերած օգնությունը, հոգալու իրենց սոցիալական կարիքները,
- Առողջապահական ներդրումներ, որոնք կատարվել են տեղի բուժօգնություններին, ինչպես նաև անհատական աջակցության տեսքով,
- Աջակցություն է ցուցաբերվել բարեգործական հիմնադրամներին՝ իրականացնելու տարբեր խոցելի խմբերի հետ ծրագրեր, հաշմանդամություն, ծերերի խնամք և այլն: Հարկ է Լչել, որ միայն 2023 թվականին ՉՊՄԿ-ից աջակցություն է ստացել 32 բարեգործական կազմակերպություն: Այս սեկտորին հատկացված ռեսուրսների 56%-ը ուղղվել է ՉՊՄԿ-ի հետ համաձայնեցված կամ համատեղ ծրագրերի իրականացմանը, իսկ 44%-ը՝ հիմնադրամների ֆինանսական աջակցությանը, որի միջոցով նրանք շարունակում են իրենց գործունեությունը:

2023 թվականին առաջին 1000 խոշոր հարկ վճարողների կողմից վճարված գումարը կազմել է ավելի քան 1 տրիլիոն 710 միլիարդ 577 միլիոն դրամ



Պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական կայքում հրապարակվել է 2023 թ. հունվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում առաջին 1000 խոշոր հարկ վճարողների կողմից վճարված հարկերի և վճարների վերաբերյալ տեղեկատվությունը: Ըստ ՊԵԿ-ի կայքում հրապարակված հեղթականության, խոշոր հարկատուների առաջին հնգյակում են հայտնվել Չանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատը, Գրանդ Տոբակո, Գազպրոմ Արմենիա, Մոբայլ Սենթր Արթ, Փրիթի Ուեյ ընկերությունները:

Ներքո: 1000 խոշոր հարկ վճարողների կողմից 2023 թ. հունվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում պետական բյուջե ընդհանուր առմամբ վճարվել է ավելի քան 1 տրիլիոն 710 միլիարդ 577 միլիոն դրամ: Հարկային մարմին կատարված վճարումների գումարը կազմել է ավելի քան 1 տրիլիոն 308 միլիարդ 983 միլիոն դրամ, իսկ մաքսային մարմին կատարված վճարումների գումարը՝ շուրջ 401 միլիարդ 594 միլիոն դրամ: **26 ՀՈՒՆՎԱՐԻ 2024Թ.**

Լացնելու տարբեր խոցելի խմբերի հետ ծրագրեր, հաշմանդամություն, ծերերի խնամք և այլն: Հարկ է Լչել, որ միայն 2023 թվականին ՉՊՄԿ-ից աջակցություն է ստացել 32 բարեգործական կազմակերպություն: Այս սեկտորին հատկացված ռեսուրսների 56%-ը ուղղվել է ՉՊՄԿ-ի հետ համաձայնեցված կամ համատեղ ծրագրերի իրականացմանը, իսկ 44%-ը՝ հիմնադրամների ֆինանսական աջակցությանը, որի միջոցով նրանք շարունակում են իրենց գործունեությունը: Կրթական ոլորտում ներդրված գումարը ներառում է Հայաստանի Հանրապետության շուրջ երկու տասնյակ մասնագիտությունների գծով ՉՊՄԿ-ի աշխատակիցների ընտանիքի անդամ հանդիսացող 1112 ուսանողների ուսման վարձավճարները: Ընդ որում,

ՉՊՄԿ-ն հետևում է ուսանողների ուսման առաջընթացին և գնահատականներից կախված, կատարում վճարների մի մասը, ուսանողներին պարտավորեցնելով հետևել ուսման առաջընթացին: Ներդրումները ներառում են նաև մի շարք այլ բնագավառներ. օրինակ, «ՉՊՄԿ» ՓԲ-ն հոգացել է Սյունիքի օդանավակայանի (566,765.828 ՀՀ դրամ), արհմիության (105,298.500 ՀՀ դրամ) և այլ ծախսեր: 2023 թվականի սոցիալական ներդրումները, ըստ աշխարհագրության: **■ Սյունիքի մարզ (Քաջարան, Կապան համայնքներ և այլ մարզային ծրագրեր)- ավելի քան՝ 4 մլրդ ՀՀ դրամ, ■ Հանրապետական տարբեր ծրագրեր - ավելի քան՝ 1,2 մլրդ ՀՀ դրամ:**

Աղբբեջանի տարածքային նոր պահանջները Հայաստանին



ՍԵՏՓՆ ԿԽԱՏՐՅԱՆ
Քաղաքագետ

2024 թ. հունվարի 11-ին օկուպանտ և ցեղասպան Աղբբեջանի սուլթան Իլ-համը հարցազրույց է տվել մի խումբ, այսպես կոչված, աղբբեջանական ՀԼԱ-ների ներկայացուցիչների, որտեղ հանդես է եկել մի շարք ստեղծ ու հակահայկական հայտարարություններով: Այսպես,

1. «Բարձրացնելով դրոշը Խոջալուում են մտածեցի, որ այսօր կարող ենք լիակատար վստահությանը ասել, որ Խոջալուի գոհների արյան վրեժը լուծված է»: Հարկ է նշել, որ նախ ոչ թե Խոջալու, այլ Իվանյան: Եվ երկրորդ, Իվանյան ավանում գոհների մասին հայտարարությունը կատարյալ սուտ է:

Հայկական կողմը Իվանյանում, այսպես կոչված, աղբբեջանցիների ցեղասպանության չի իրականացրել: Օկուպանտ Աղբբեջանի սուլթան Իլ-համը, ստեր տարածելով, տարիներ շարունակ մեղադրում է հայկական կողմին այդ առնչությամբ, մինչդեռ այդ դեպքի իրական մեղավորներին օբյեկտիվորեն մատնանշել է 1991-1992թթ. Աղբբեջանի նախագահ Այազ Մուլախիբովը 1992թ. ապրիլի 2-ին «Независимая газета» ռուսալեզու թերթին տված հարցազրույցի ժամանակ՝ հայտարարելով, որ դրա կազմակերպիչը և մեղավորը Աղբբեջանի ժողովրդական ճակատն է, որը ցանկանում էր այդ ժամանակ հեռացնել իրեն իշխանությունից և վերցնել իշխանությունը:

22 տարի անց՝ 2014թ. փետրվարի 27-ին, արաբական «Ալ-Չազիրա» միջազգային հեռուստատեսային թուրքական ծառայությունը տված հարցազրույցի ժամանակ, Ա. Մուլախիբովը վերահաստատել է իր կարծիքը՝ հայտարարելով, որ «...Աղբբեջանի ժողովրդական ճակատն կողմից ստեղծված այդ սարսափն ուղղված է եղել իմ դեմ, քանի որ ես էի այդ ժամանակ նախագահը: ...Ընթացում էր պայքար իշխանության համար: Որքան Մուլախիբովի համար վատ լինի, այնքան լավ նրա հակառակորդների համար»:

2. «1918 թվականին՝ Աղբբեջանի հեմոկրատական Հանրապետության ստեղծումից մեկ օր անց, Երևան քաղաքը, ցավոք, փոխանցվեց Հայաստանին: Չնայած սրա համար պատճառ չկար: Սա հնագույն աղբբեջանական քաղաք է: Աղբբեջանական ժողովուրդն այնտեղ ապրել է դարեր շարունակ»: Սուտ է ու կեղծիք: Այն ժամանակ, երբ Երևանը ինչպեստակվում է հայ և օտարազգի պատմագիրների աշխատություններում, Աղբբեջան անունով երկիր գոյություն չուներ:

3. «1920 թվականի ապրիլին խորհրդայնացումից հետո, արդեն նոյեմբերին խորհրդային կառավարությունը Արևմտյան Հայաստանի զգալի մասը դուրս բերեց Աղբբեջանից և փոխանցեց Հայաստանին»: Կրկին սուտ է ու կեղծիք: Իրականությունը հետևյալն է. 1920թ. նոյեմբերի 29-ին Հայաստանի Հանրապետությունում հաստատվում են խորհրդային կարգեր: Ի նշան Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման, Խորհրդային Աղբբեջանի հեղափոխական կոմիտեի նախագահ Լարիման Լարիմանովը շնորհավորական ուղերձ է հղել, որտեղ հայտնել է, որ նոյեմբերի 30-ին Աղբբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Հեղկոմն ընդունել է որոշում, ըստ որի «Այսօրվանից Հայաստանի և Աղբբեջանի միջև սահմանային վեճերը հայտարարվում են վերացված: Լեռնային Ղարաբաղը, Հանգեզուրը և Լախիջևանը հա-

մարվում են Հայաստանի Սոցիալիստական Հանրապետության մասը»: Խորհրդային Աղբբեջանի Հեղկոմի վերոնշյալ որոշումը, ստորագրված Հեղկոմի նախագահ Լարիման Լարիմանովի և արտաքին գործերի ժողովրդական կոմիտեի Միրզա Հուսեյնովի կողմից, 1920թ. դեկտեմբերի 7-ին ստագրվել է Երևանում լույս տեսնող «Կոմունիստ» թերթի 2-րդ համարում հայերեն թարգմանությամբ:

4. «Կա Աղբբեջանի հեմոկրատական Հանրապետության քարտեզ, որտեղ Հանգեզուրը, ոչ թե արևելյան կամ արևմտյան, այլ ամբողջ Հանգեզուրը Աղբբեջանի տարածքն է»:

Խոսքը Ազգերի լիգային ներկայացված քարտեզի մասին է, որը Ազգերի լիգային անդամակցելու դիմումի հետ միասին ներկայացրել էր Աղբբեջանի հեմոկրատական Հանրապետության իշխանությունը: Սակայն Ազգերի լիգայի 5-րդ կոմիտեն 1920թ. դեկտեմբերի 1-ին բացասական եզրակացություն էր տվել Աղբբեջանի դիմումին, մասնավորապես արձանագրելով, որ «...դժվար էր պարզել այն տարածքի ճշգրիտ սահմանները, որտեղ Աղբբեջանի կառավարությունն իրականացրել է իր իշխանությունը: Հարևան երկրների հետ ունեցած սահմանային վեճերը թույլ չտվեցին ճշգրիտ որոշելու Աղբբեջանի սահմանները: Կոմիտեն որոշեց, որ Պայմանագրի պայմանները թույլ չտվեցին Աղբբեջանին անդամակցելու Լիգային ներկա հանգամանքներում»:

5. «Մեր հողերը մաս-մաս տրվել են Հայաստանին, Աղբբեջանի հեմոկրատական Հանրապետության տարածքի մակերեսը կազմել է զրեթե 100 հազար բառ. կմ»: Կրկին սուտ և կեղծիք: Ստանալով Ազգերի լիգայի 5-րդ կոմիտեի մերժումը՝ Աղբբեջանի հեմոկրատական Հանրապետությունը վերացել է աշխարհի քաղաքական քարտեզից՝ այդպես էլ չունենալով հռչակված և միջազգայնորեն ճանաչված սահմաններ, որի իրավաչափը այսօր հանդիսանում է ներկայիս Աղբբեջանը:

Օկուպանտ և ցեղասպան Աղբբեջանի սուլթան Իլ-համը հայտարարած 100 հազար բառ. կմ թիվը նկատի առնելով՝ կարող ենք ասել, որ Աղբբեջանը 14 հազար բառ. կմ-ի չափով տարածքային նոր պահանջ է ներկայացնում Հայաստանին:

6. Խոսելով Հայաստանի այն առաջարկի մասին, ըստ որի Հայաստանի և Աղբբեջանի միջև ղեկիմտացիան և դեմարկացիան առաջարկվում է իրականացնել 1970-ականների քարտեզերի հիման վրա՝ օկուպանտ և ցեղասպան Աղբբեջանի սուլթան Իլ-համը, մասնավորապես, ասել է. «Եթե անդրադառնանք քաղաքական պատճառներին, ապա պետք է որպես հենակետ ընդունենք կամ Աղբբեջանի հեմոկրատական Հանրապետության ստեղծման, կամ խորհրդայնացման շրջանը»:

Հարկ է նշել, որ Աղբբեջանի պարագայում չկա իրական հիմք ընդունելու ոչ Աղբբեջանի հեմոկրատական Հանրապետության շրջանի քարտեզը, ոչ էլ Խորհրդային շրջանի քարտեզը: Բանն այն է, որ 1991թ. օգոստոսի 30-ին Աղբբեջանի Հանրապետության Գերագույն խորհուրդն ընդունել է «Աղբբեջանի Հանրապետության պետական անկախության վերականգնման մասին» հռչակագիր, իսկ 1991թ. հոկտեմբերի 18-ին Աղբբեջանի Հանրապետության Գերագույն խորհուրդն ընդունել է «Աղբբեջանի Հանրապետության պետական անկախության վերականգնման մասին» Աղբբեջանի Հանրապետության սահմանադրական ակտը: Թե հռչակագրով, թե սահմանադրական ակտով Աղբբեջանը հրաժարվել է Խորհրդային Աղբբեջանի իրավահաջորդությունից և իրեն հայտարարել 1918թ. մայիսի 28-ից մինչև 1920թ. ապրիլի 28-ը գոյություն ունեցած Աղբբեջանի Հանրապետության իրավահաջորդը:

Ինչ վերաբերում է Աղբբեջանի հեմոկրատական Հանրապետության գոյության շրջանում գոյություն ունեցած քարտեզերի օգտագործմանը, ապա դա ևս հնարավոր չէ: Քանզի Աղբբեջանի հեմոկրատական Հան-

րապետությունը չի ունեցել հռչակված և միջազգայնորեն ճանաչված սահմաններ: Այս պարագայում հարց է առաջանում. ինչպե՞ս իրականացնել Հայաստանի և Աղբբեջանի միջև սահմանագծում և սահմանազատում:

Բանն այն է, որ Փարիզում խաղաղության վեճաժողովում Հայաստանի սահմանների սահմանագծման վերաբերյալ հանձնաժողովը 1920թ. փետրվարի 24-ին հրապարակել է գեկույց, որտեղ, մասնավորապես, նշել է հետևյալը. «Ինչ վերաբերում է Հայաստանի, Վրաստանի և Աղբբեջանի սահմաններին, Հանձնաժողովը գտնում է, որ այժմ գերադասելի է սպասել վերջը նշված սահմանների հստակեցման վերաբերյալ համաձայնագրերի արդյունքներին, որոնք երեք հանրապետությունները կարոտացունեն պայմանագրերում: Այն դեպքում, երբ տվյալ հանրապետությունները իրենց սահմանների վերաբերյալ չզան որևէ համաձայնության, հարցը պետք է փոխանցվի Ազգերի լիգայի արբիտրաժին, որը կստեղծի միացյալ հանձնաժողով՝ վերջը նշված սահմանները տեղում որոշելու համար՝ որպես սկզբունք հաշվի առնելով ազգագրական տվյալները»: Քանզի որ այսօր գոյություն չունի Ազգերի լիգան, այլ գոյություն ունի դրա իրավահաջորդ ՄԱԿ-ը, ապա Հայաստանի և Աղբբեջանի սահմանների սահմանագծման և սահմանազատման հարցը լուծելու նպատակով կարելի է դիմել ՄԱԿ-ին՝ առաջարկելով ստեղծել համապատասխան հանձնաժողով:

7. Խոսելով, այսպես կոչված, աղբբեջանական գորբերի՝ Հայաստանի օկուպացրած տարածքներից հետ քաշվելու մասին, Իլ-համը, մասնավորապես, ասել է. «...մենք, իհարկե, ոչ մի տեղ ենք պատրաստվում վերադառնալ: Մենք մեկ քայլ չենք հեռանա և՛ 2021 թվականի մայիսի, և՛ 2022 թվականի սեպտեմբերի մեր դիրքերից, քանի որ այս սահմանը պետք է հաստատվի»: Օկուպանտ Աղբբեջանի գիևած կազմավորման ստորաբաժանները Հայաստանի տուվերեն տարածքից հնարավոր է հեռացնել միայն և բացառապես միայն զենքի ուժով:

8. «Մենք կարծում ենք, որ խաղաղության պայմանագիրը պետք է ստորագրվի, և որքան շուտ, այնքան լավ... Իսկ սահմանազատման գործընթացը պետք է շարունակվի»: Շատ լավ հասկանալով, որ Հայաստանի և Աղբբեջանի միջև սահմանագծման և սահմանազատման հարցի կարգավորումը տևելու է շատ երկար՝ Աղբբեջանը կարևորություն չի տալիս նշված հարցին:

Փոխարենն օկուպանտ և ցեղասպան Աղբբեջանի սուլթան Իլ-համը կենտրոնացել է խաղաղության պայմանագրի ստորագրման հարցի վրա և ձգտում է հասնել Հայաստանի հետ տվյալ փաստաթղթի ստորագրմանը, որով Հայաստանն առաջին անգամ գրավոր կերպով կընդունի Արցախի պատկանելիությունը Աղբբեջանին:

Ամփոփելով՝ կարող ենք հանգել հետևյալ եզրակացություններին

Հայաստանի և Աղբբեջանի դիրքորոշումները զգալիորեն տարբերվում են միմյանից: Այդ տարբերությունները պայմանավորող խնդիրներն այնքան արմատական բնույթ ունեն կողմերի համար, որ քիչ հավանական է թվում կողմերի կողմից արժարժված խնդիրների լուծման արդյունքում նրանց դիրքորոշումների մերձեցում:

Կողմերի դիրքորոշումների արմատական տարբերությունները լավատեսություն չեն ներշնչում աղբբեջանաարցախյան հակամարտության, ինչպես նաև Հայաստանի և Աղբբեջանի միջև հարաբերությունների շուտափույթ, խաղաղ և արդար կարգավորման առնչությամբ:

Հայաստանի տարածքի որոշ հատվածների և Արցախի Հանրապետության դեֆոկուպացիային հնարավոր է հասնել միայն զենքի ուժով: Պատմությունն անառարկելի փաստերով բազմիցս ապացուցել է, որ Աղբբեջանի համար գրոշի արժեք չունի իր կողմից ստորագրված որևէ փաստաթուղթ, նա հասկանում է միայն և բացառապես միայն ուժի լեզուն:

«Հանգեզուրի միջանցքի» մասին երբեք խոսք չի եղել եռակողմ պայմանավորվածություններում

«Վերջին օրերին Հայաստանի և Աղբբեջանի ղեկավարներն իրենց հանրային ելույթներում անդրադառնում են Աղբբեջանի հիմնական մասի և Լախիջևանի միջև կապի հաստատման թեմային. վարչապետ Փաշինյանն ինչ-որ տեղ ասել է, որ Հայաստանը կտրականապես դեմ է «Հանգեզուրի միջանցքին»: «Հանգեզուրի միջանցքի» մասին երբեք խոսք չի եղել այն պայմանավորվածությունների շրջանակում, որոնք ձեռք են բերվել ՌԴ-ի, Աղբբեջանի նախագահների և Հայաստանի վարչապետի միջև», – այս մասին մեծ մամուլի ասուլիսի ընթացքում ասաց ՌԴ ԱԳՆ ղեկավար Սերգեյ Լավրովը:

Նրա խոսքով՝ հայտարարությունում, որը ստորագրվել է 2020թ. նոյեմբերի 9-ին՝ կանգնեցնելով պատերազմը, ասված է, որ կապաշրջափակվեն բոլոր տնտեսական և տրանսպորտային կապերը, որ Հայաստանը երաշխավորում է տրանսպորտային հաղորդակցության անվտանգություն և Աղբբեջանի արևմտյան շրջանների և Լախիջևանի միջև երկու ուղղությունով, և այդ տրանսպորտային հաղորդակցության վերահսկողությունն իրականացնում են ՌԴ սահմանապահ ծառայության մարմինները:

18 ՅՈՒՆԻՎԵՐՍԻ 2024 թ.

«Հանգեզուրի միջանցքի» ստեղծումը կհանգեցնի Հայաստանի ինքնիշխանության վերացմանը

Ռուս քաղաքական գործիչ, ՌԴ Պետական դոմայի պատգամավոր Վիտալի Միլոնովը Alpha News-ի հետ զրույցում մեկնաբանել է Աղբբեջանի նախագահ Իլհամ Ալիևի՝ այսպես կոչված, հայտարարությունը «Հանգեզուրի միջանցքի» մասին:

«ՆԱՏՕ-ի դաշինքի հետ Թուրքիայի տեսքով դաշնակցությունը Ալիևին թույլ է տալիս այդպես արտահայտվել, որովհետև հասկանալի է, որ նման հայտարարությունը համաձայնեցվում է իր գործընկերների հետ: Եթե մենք խոսում ենք Երևանի և Բաքվի միջև հարաբերությունների ինչ-որ կարգավորման մասին, ապա ես չեմ կարող պատկերացնել, թե ինչ կորոպայանում կարող է լինել այն ամենից հետո, ինչ տեղի ունեցավ:

«Հանգեզուրի միջանցքը» Հայաստանի ինքնիշխանության հանձնումն է: «Հանգեզուրի միջանցքի» շուրջ պայմանավորվածությունները կհանգեցնեն նրան, որ Հայաստանը կավարտի իր բազմաճակատաճարակ տարիների գոյությունը», – ընդգծել է ռուս պատգամավորը:

«Խաղաղության պայմանագիրը մի պայման է, որն այժմ բարձրաճանկում է Բյուրեղում և Վաշինգտոնում, որպեսզի հետո այդ խաղաղության պայմանագրի միջոցով Հայաստանը պարուրվի մի շարք միջազգային պարտավորություններով, որոնք ամբողջությամբ կգրվեն նրան ինքնիշխանությունից և սուբյեկտիվությունից: Այսինքն՝ Բյուրեղը, կարծես թե, կլինի այդ խաղաղ պայմանագրի հեղինակը, և Հայաստանի ցանկացած շարժում, որը չի բավարարի Բյուրեղին, կնշանակի խաղաղության պայմանագրի խզման վտանգ՝ Հայաստանի դեմ ռազմական գործողությունները շարունակելու հարցում: Դրանով Բյուրեղը կկարողանա թելադրել իր պայմանները բոլոր ուղղություններով: Չմոռանալ՝ այն գեներ, որն Աղբբեջանն օգտագործում է, նա ոչ միայն գնում է, այլև ստանում է ՆԱՏՕ-ի երկրներից: Եվ մենք շատ լավ հասկանում ենք, որ եթե լինի Բյուրեղի կամ Վաշինգտոնի քաղաքական կամքը, ապա Լեռնային Ղարաբաղում Աղբբեջանի վարքագծի բնույթը բոլորովին այլ կլինի:

Եվ դա նշանակում է, որ Աղբբեջանը քարտուրանել է ստացել Ղարաբաղում իր գործողության համար, ուստի ոչ ոք լոջորեն չի միջամտել:

Տեսե՞ք, թե ինչպիսի աննախադեպ ճշում է գործադրվել Ռուսաստանի վրա Ուկրաինայի արևելքում հատուկ գործողության ժամանակ և ինչպիսին է Աղբբեջանի վրա ճշումը Ղարաբաղում գործողության ժամանակ, ինչը թույլ է տալիս ենթադրել՝ արցախահայության էթնիկ գտումը գործողություն էր, որն առնվազն սուբյեկտային համաձայնություն և ստացել արևմտյան երկրներում», – եզրակացել է Միլոնովը:

Կա՞ Սյունիքում մի պաշտոնյա, ով պատասխանատու է մարզի տարածքով անցնող միջպետական և հանրապետական ճանապարհների անցանելիության համար

15 ՀՈՒՆՎԱՐԻ 2024 Թ.

Վերջին օրերին տեղացած ձյան առատ տեղումները Նոր փորձություն են մարզի ճանապարհաշինական կազմակերպությունների համար...

Այսօր առավոտվանից անանցանելի է Տաթև-Շինուհայր ճանապարհի Սատանի կամրջի հատվածը: Ժամը 12-ի դրությամբ ճանապարհներին այն իրավիճակն էր, որն արտացոլված է կից ներկայացվող լուսանկարներում:

Ճանապարհին հարկադրաբար կանգնած վարորդները գայրացած էին, հայիդում էին բոլոր պատասխանատուներին՝ անուն առ անուն...

Վարորդներն առնվազն հինգ հարց բարձրացրին՝ խնդրելով փոխանցել պատկան մարմիններին.

- Ի՞նչ իմաստ ունեւ Տաթև-Լծեն՝ միջպետական դարձնել կանաչ ճանապարհի կառուցումը, որ ամենաթեթև ձևն տեղումներից հետո չի գործելու,
- Ի՞նչ կազմակերպությունն է սպասարկում Բարձրավանի և Քաշունի (տեթ, իհարկե, սպասարկում է) խաչմերուկից մինչև Սատանի կամրջ և Շինուհայրի խաչմերուկ ընկած ճանապարհը,
- Ինչպե՞ս է ստացվում, որ Կապան բաղաձայն (Սյունիք գյուղի խաչմերուկից սկսած) մինչև Բարձրավանի և Քաշունի խաչմերուկ ընկած ճանապարհահատվածը լիովին մաքրված է, իսկ այդ խաչմերուկից մինչև Սատանի կամրջ՝ ձյունածածկ, տեղ-տեղ անանցանելի,
- Ի՞նչ կազմակերպությունն է սպասարկում Կապան-Երևան մայրուղու Տաթև-Լծեն ճանապարհահատվածը (տեթ, իհարկե, սպասարկում է),
- Կա՞ Սյունիքում մի պաշտոնյա, ով պատասխանատու է կրում մարզի տարածքով անցնող միջպետական և հանրապետական ճանապարհների անցանելիության ու անվտանգ երթևեկության համար:

Ահա այսպես էլ գլուխներս պահում եմ՝ մեր աշխատանքայններում վեր ընկած, ամսական պարզապահները պարտադիր ստանալով, գրո արժեք ունեցող պատվոգրանման թղթերը ստրուկներին շաբաշ տալով...

16 ՀՈՒՆՎԱՐԻ 2024 Թ.

Բեռնատար մեքենաների՝ մոտ 1 կմ երկարությամբ ձգվող առաջին շարայանը հանդիպում ենք Կապանի տարածաշրջանի Անտառաշատ գյուղի խաչմերուկի մերձակայքում: Շարայան հետագա ընթացքը դադարեցված էր, քանզի Քաշունի-Բարձրավան խաչմերուկում ուղղակի խառնաշփոթ էր տիրում...

Բեռնատար մեքենաների նման շարայանների հանդիպեցինք Քաշունի-Բարձրավան խաչմերուկից մինչև Տանձատափի խաչմերուկ ընկած ամբողջ ճանապարհին, հետո՝ Զայիձոր գյուղի, ապա Շինուհայրի մատուցներում:

Ավելի տխուր վիճակ էր Շինուհայրից մինչև Ս2 (Շինուհայրի խաչմերուկ) ընկած հատվածում: Թեև քամին երեկվա պես գծված չէր, բայց ճանապարհի որոշ հատվածներ անանցանելի էին, իսկ մաքրող մեքենաներ չկային:

Ամբողջ ճանապարհին՝ մի տեղ փրկարարներին ամենազնազներն էին քարշակում ձյան մեջ խրված մեքենան, մեկ ուրիշ տեղ խոշոր բեռնատարը թեքվել էր ճանապարհին էր փակել, դե իսկ Վերին Խոտանանի հայտնի ոլորտում (ինչպես միշտ) կանգնած բեռնատարն անհար էր դարձել նորմալ երթևեկությունը:

Այդ ամենի խտացված արտահայտությունը կարելի էր տեսնել Շինուհայրի խաչմերուկում, որտեղ, ամեն ինչից գատ, ձնաբքի խկական հանդես էր...

Ստեղծված իրավիճակում դրվատանքի խոսք պիտի ասել Կապանի եւ Գորիսի տարածաշրջանների պարեկների հասցեին: Միայն նրանց ակտիվ ու լարված գործունեության շնորհիվ էր հնարավոր դառնում շատ թե քիչ կարգավորել դրությունը:

Ինչո՞ւ է նման իրավիճակ ստեղծվել Սյունիքի ճանապարհներին: Զարցի հիմնական պատասխանը փորձել ենք տալ երեկվա մեր հրապարակման մեջ՝ syuniacyerkir.am կայքում:

Ավաճիկն ավելացնենք հետևյալը՝ Տաթև-Շինուհայրի խաչմերուկ ճանապարհի ամրալի վիճակը պայմանավորված է «Ոսմար»-ի ոչ բավարար գործունեությամբ: Միեւնույն ժամանակ (հանուն ճշմարտության Նշենք) «Ոսմար»-ն այս անգամ անհամեմատ լավ է աշխատում ճանապարհներին, քան մեկ տարի առաջ, բայց... ճանապարհաշինական այդ ընկերությունը չի կարողանում ըստ պատշաճի ապահովել մեքենաների (հատկապես բեռնատարների) անվտանգ երթևեկը:



Ինչի՞ նման է՝ քիչ առաջ Շինուհայրի խաչմերուկում հանդիպեցինք սիսիանցի վարորդներին, որոնց մեկուկէս օր առաջ հանդիպել էինք Սատանի կամրջում: Եվ նման բազմաթիվ օրինակներ:

Ի՞նչ անել խայտառակ այս իրավիճակը շտկելու եւ առաջիկա հնարավոր տեղումների դեպքում մարզի ճանապարհներին նորմալ իրավիճակ ապահովելու համար:

Նախ՝ ելնելով Գորիսի տարածաշրջանին բնորոշ բնակլիմայական ոչ սովորական պայմաններից, անհապաղ օգնող տեխնիկա ուղարկել Գորիս՝ «Ոսմար»-ին աջակցելու համար: Այնուհետև՝ «Ոսմար»-ի ղեկավարումը գոնե ժամանակավորապես վստահել ավելի կարող մի անձնավորության. դրանում պետք է որբեւ արտառոցություն փնտրել:

Բազմաթիվ տարբերակներից մեկը՝ խնդրել-համոզել հայտնի ճանապարհաշինարար Ազատ Գասպարյանին՝ ընթացիկ ձմռանը գլխավորելու միջպետական ճանապարհների սպասարկման գործընթացը Սյունիքի ամբողջ տարածաշրջանում: Ի դեպ, այսօր վերականգնվել էր երթևեկությունը Տաթև-Լծեն նորակառուց մայրուղում... մինչև Նոր տեղումներ:

17 ՀՈՒՆՎԱՐԻ 2024 Թ.

Ձյան առատ տեղումներից հինգ օր անց Նոր-Նոր կարգավորվում է իրավիճակը Սյունիքի տարածքով անցնող միջպետական և հանրապետական մայրուղիներում:



Այսօր՝ հունվարի 17-ին, օրվա երկրորդ կեսից ճանապարհներին մնացած բեռնատարների քարավանները սկսել են շարժվել առաջ, բայց մինչև Շինուհայրի խաչմերուկ: Այնտեղ հիմա անթիվ-անհամար մեքենաների կուտակումներ են, իսկ Ս2-ով դեպի Սիսիան երթևեկելը (այդ խաչմերուկից սկսած) դադարեցված է, քանզի մաքրման աշխատանքներ են ընթանում, իսկ Իշխանասարից ու Գրկա Ձագեձորը (եռնազագաթից գրոհող ձյունամրիկը չի դադարում:

այնտեղ թեև մաքրման ակտիվ աշխատանքներ են ընթանում, բայց մայրուղին շարունակում է ոչ երթևեկելի մնալ հատկապես խոշոր բեռնատարների համար (ժամը 16:00-ի դրությամբ):

Մեկ ուրիշ խնդրի հետ էլ են բախվել ճանապարհին մնացած վարորդները. դեռևս 4-5 օր առաջ Կապանից դուրս եկած և Նոր-Նոր Շինուհայրի խաչմերուկ հասած բեռնատարների վարորդներից ոմանք բողբոջում էին, թե իրենք լուրջ վնասներ են կրել՝ մնալով ճանապարհին: Եվ փորձում էին ճշտել՝ վնասների գնահատում, փոխհատուցում լինելո՞ւ է, թե՞ ոչ:

Ստեղծված իրավիճակում առանցքային դերակատարություն ունեցան և ունեն, ինչպես արդեն Նշել ենք, Գորիսի և Կապանի պարեկները, առանց որոնց դժվար կլիներ շատ թե քիչ կարգավորել մարզի մայրուղիներում ստեղծված ամրալի խառնաշփոթը:

26 ՀՈՒՆՎԱՐԻ 2024 Թ.

Հունվարի 26-ին, հետկեսօրից սկսած, Շինուհայրից մինչև Ս2 (Շինուհայրի խաչմերուկ) ճանապարհն անանցանելի էր դարձել խոշոր բեռնատարների համար:

Շինուհայրի ենթակայանից սկսած՝ մոտ 3 կմ երկարությամբ, ձգվում էր ճանապարհին դադար առած բեռնատարների շարայունը:

Ճանապարհի այդ հատվածը՝ որոշ տեղերում, անանցանելի էր նաեւ թեթև մարդատար մեքենաների համար, որոնք էլ հարակից դաշտերով էին փորձում դուրս գալ լաբիրինթոսից: Մեր լուսանկարչական ապարատը ֆիքսեց ժամը 17-18-ին ճանապարհի տվյալ հատվածում ստեղծված վիճակը... Արդյո՞ք հարյուրավոր այդ մեքենաները՝ ճանապարհին կանգ առած, այս գիշեր կմնան ձյան մեջ, թե՞ կկարողանան հասնել Ս2 մայրուղի...

Եվ գիտե՞ք՝ որն է այս իրավիճակի ամենամեծ խայտառակությունը: Այն, որ օրեր առաջ (ձնառատ տեղումներից հետո) Սյունիքի ճանապարհներին ստեղծված ամրալի եւ անկառավարելի իրավիճակից դասեր չեն քաղում պատկան մարմիններն ու կազմակերպությունները, որանց ղեկավարները:

26 ՀՈՒՆՎԱՐԻ 2024 Թ.

Ոչ սովորական իրավիճակ էր նաեւ Վերին Խոտանանի մատուցներում: Ճանապարհները մաքուր էին, որոշ տեղերում նույնիսկ չոր, բայց տասնյակ բեռնատար մեքենաներ ստիպված կանգ էին առել ու չէին կարողանում ընթանալ առաջ...

44-օրյա պատերազմից հետո, երբ թուրքը շրջափակեց Ս2 մայրուղու որոշակի հատված, ստիպված էինք եւ եսք երթևեկել Վերին Խոտանանում անցնող ճանապարհով: Ու միշտ էլ կամ գրեթե միշտ նման իրավիճակների եսք բախվում Նշված հատվածում:

Պարզագույն մի հարց՝ մի՞տե հնարավոր չէ Վերին Խոտանանում մշտապես ունենալ քարշակող որբեւ մեքենա եւ պարեկային ծանայության հենակետ:

Մի խոսքով՝ Սյունիքի մայրուղիներում ընթացիկ ձմռանը բախվել ենք մի իրողության, որ չգիտենք նույնիսկ՝ ո՞ւմ դիմել նման հարցերով կամ ո՞ր կազմակերպությունից ակնկալել մտահոգող հարցերի պատասխանը:

##

Առաջարկվում է «Յայոց պատմություն» առարկան վերանվանել «Յայաստանի պատմություն». իսկ ի՞նչ են մտածում Սյունիքի պատմաբաններն ու բանասերները



ՍԱՄՎԵԼ ԱՆԵՃՍԱՆՅԱՆ

Յայոց պատմության առաջարկությունը հրապարակված է, և կարծում ենք, փաստաթղթին ծանոթ են մեր պատմաբանները, բանասերները, մանկավարժները, նաև նրանք, ովքեր իրենց մտավորական են համարում: Առաջարկն այս օրերին լայնորեն և բուռն քննարկվում է մեր հանրության ամենատարբեր շրջանակներում:

Ստեղծված իրավիճակում չափազանց կարևոր ենք համարում Սյունիքի դիրքորոշման հստակեցումը, բնագիտական և մշակութային հավասարակշռված ու ողջամիտ են երևում մեր ազգային ու պետական գրեթե բոլոր հարցերի պատասխանները (բազմաթիվ փաստարկներ կան այդպես արտահայտվելու համար):

Սյունիքի դիրքորոշումը (տվյալ հարցում) կարող են արտահայտել առնվազն մարզի պատմաբանները, բանասերները, կրթական ոլորտի պատասխանատուները և ընդհանրապես ազնու սերնդի կրթությամբ ու դաստիարակությամբ զբաղվող յուրաքանչյուր ոք: Ուրեմն՝ ակնկալում ենք, որ մարզի՝ գրեթե նշված ոլորտների ներկայացուցիչները կարտահայտեն իրենց դիրքորոշումը խնդրո առարկայի վերաբերյալ, եթե, իհարկե, սեփական կարծիք կամ դիրքորոշում ունեն և ի վիճակի են իրենց մտածումները գրավոր կամ ձայնագրված փոխանցել մեզ:

«Սյունյաց երկիրը» պատարաստ է հրապարակել յուրաքանչյուրի տեսակետը՝ առանց որևէ փոփոխության: Ընդ որում՝ առաջարկին կողմ կամ դեմ արտահայտվողները, կարծում ենք, շատ թե քիչ կհիմնավորեն իրենց դիրքորոշումը, այլապես ակնկալվող խոսակցությունը հեռու կլինի լրջությունից: Այսպիսով՝ սպասում ենք մեր մտավորականների, մեր պատմաբանների ու բանասերների, հանրակրթական դպրոցների տնօրենների և սիրելի ուսուցիչների արձագանքին:

* * *

Ընթերցողը, բնականաբար, մեր առաջարկությանը նախնառաջ կհակադրվի այսպիսի հարցով՝ իսկ «Սյունյաց երկիրը» ունի՞ կարծիք կամ դիրքորոշում: Եվ դա օբյեկտիվ հարցադրում կլինի: Իսկապես, ո՞րն է մեր դիրքորոշումը, երբ ինքներս ենք ուրիշներից արձագանք ակնկալում ԿԳՄՍ նախարարության առաջարկի վերաբերյալ: Իհարկե՛ մեր դիրքորոշման մասին:

Նախ՝ հայոց ազգային-պետական ներկայիճակում անպատեհ ենք համարում առաջարկվող փոփոխությունը և դրա շուրջ հանրապետության մասշտաբով քննարկումների կազմակերպումը, ինչին ականատես ենք: Այսօր ազգովի կանգնած ենք լրջագույն մարտահրավերների առջև, վտանգված է մեր պետականության լինելությունը, խախտված է մեր երկրի տարածքային ամբողջականությունը: Ու ներկա ընթացքում նախնառաջ և ամբողջովին պետք է կենտրոնանանք այդ սպառ-

նալիքներին դիմակայելուն միտված հարցերի վրա: Լուրջ չէ և նույնիսկ ազնիվ չէ նման իրավիճակում այլ հարցերով զբաղվելը...

Բայց եթե քննարկման է դրվել առաջարկը, ուրեմն խոսենք...

Առաջին. դեռևս նախաբնութագրված ժամանակներից և հատկապես հայոց գրեթե գյուղացի հետո հայ ժողովուրդը կուտակել է բացառիկ հարուստ փորձ կրթության, դաստիարակության, մանկավարժության ոլորտներում: Առանց չափազանցության՝ աշխարհի քիչ ժողովուրդներ տվյալ ոլորտում ունեն այնքան փորձ և ավանդույթներ, որքան հայ ժողովուրդը: Ասել է թե՛ տեղին չենք համարում Նիդկաստանի, Բրիտանիայի, Իտալիայի, Չինաստանի, Վրաստանի, Ղազախստանի, Սաուդյան Արաբիայի փորձը իմք ընդունելու: Մյուս կողմից՝ թե՛ վկայակոչում ենք այդ երկրների ուսանելի կամ ընդօրինակման արժանի մոտեցումները, ապա խելամիտ կլինեք (զուտ համառոտությամբ) ներկայացնել այդ երկրների փորձը: Ավելին, որպեսզի իմք ընդունենք այդ երկրների փորձը, ապա հարկ է նախնառաջ մեր ժողովրդի հազարամյակների պատմությունը, մեր ժողովրդի ներկա վիճակը, մեր երկրին սպառնացող վտանգները փորձ-ինչ համեմատել այդ երկրների պատմությունը, ներկա կացությունը:

Մեծագույն հարգանք ունենալով այդ երկրների ու նրանց ժողովուրդների հանդեպ, միաժամանակ պարտավոր ենք արձանագրել՝ համեմատություններ անելու որևէ եզր չենք տեսնում, որևէ հարցում նրանց հետ նույնական լինելու իմք չենք տեսնում: Մենք գիտենք, թե ինչ խնդիրներ պետք է լուծի կրթական համակարգը Յայաստանում, բայց չգիտենք, թե Ղազախստանում կամ Սաուդյան Արաբիայում, օրինակ, ինչ խնդիրներ են ծանացած դասագրքեր ստեղծելու ոլորտում, կրթության և դաստիարակության ոլորտում:

Երկրորդ. ԿԳՄՍ նախարարությունն առաջարկի հիմքում դնում է Յայոց պատմության Լիկո Փաշինյանի նկատառումը՝ «Իսկ ինչո՞ւ չունենալ, ասենք, հայ պետականության պատմություն»:

Իսկապես, ինչո՞ւ չունենանք, բայց...

Այդ դեպքում պարզագույն մի բանի ճշտում պետք է կատարենք սկզբից և եթե:

Արդյո՞ք հայ պետականության պատմությունն ընդգրկելու է, ասենք, Յայկական լեռնաշխարհի խոշորագույն հայկական պետություն՝ Ուրարտուի կամ Վանի թագավորության պատմությունը (մ.թ.ա. 9-6-րդ դարեր): Կամ, օրինակ, Երվանդունիների (մ.թ.ա. 6-2-րդ դարեր), Արտաշեսյան (մ.թ.ա. 189-մ.թ.ա. 1), Արշակունյաց (66-428 թթ.) հայկական թագավորությունների պատմությունը:

Կամ՝ Անի մայրաքաղաքով Բագրատունիների, Կապան մայրաքաղաքով Սյունիքի թագավորության, Վասպուրականի թագավորության, Կյուրիկյան կոչված ձորագետցիների թագավորության, Կարս-Վանանդի թագավորության, Սյունիք-Արցախի միասնական պետության, Աղվանքի հայոց պետության, Գարեգին Նժդեհի գլխավորած Լեռնահայաստանի պետության պատմությունները:

Դարեր շարունակ հայոց պետականության և ինքնիշխանության ստույգ ու փառաբերիչ դրսևորումներ են եղել մեջիջքությունները: Իհարկե՛ հայ պետականության պատմությունն ուսումնասիրելիս անդրադառնալու է ենք, օրինակ, Քաջարիկի մեջիջքությունը, որն ընդգրկում էր Սյունիքի մարզի ներկայիս տարածքը, ինչպես և Քարվաճառը, Լաչին կոչված դժբախտությունը, Կուբարյին, Չանգեյան

կեղծված անվամբ Կովսակյանը: Անդրադառնալու ենք արդյոք Խամսայի մեջիջքություններին, որոնք 17-19-րդ դարում հայոց Արցախի լիակատար ինքնիշխանության վառ օրինակ են եղել: Անդրադառնալու ենք երեք տասնամյակ գոյատևած և վերահասանումի հույսով շնչող Արցախի Յանտապետության հերոսական պատմությանը:

Ասել է թե՛ բոլոր այդ հարցերի պատասխանը պետք է տրվի նախապես, այլապես լիարժեք չի կարող լինել «Յայ պետականության պատմություն» ենթադրյալ առարկային կյանքի ուղեգիր տալը:

Երրորդ. «Յայոց պատմություն», թե՛ «Յայաստանի պատմություն»: Իհարկե՛ պատասխանը, որքան տեղյակ ենք, տվել է Պատմափորձի Մովսես Խորենացին, երբ մեր ժողովրդի պատմությունն անվանեց «Յայոց պատմություն» (5-րդ դար): Ընդ որում՝ «Յայոց պատմությունը» ոչ միայն դասագիրք է ծառայել հայ հասարակության հետագա սերունդներին համար և կրթել նրանց հայրենասիրության ու քաղաքացիականության ոգով, այլ՝ Լուրջ և օրինակ է եղել բոլոր միջնադարյան հայ պատմիչների համար, ովքեր, իրենց երկերը շարադրելիս, իմք են ընդունել Խորենացու ձևակերպումը:

5-րդ դարի հայ պատմիչ Ազարկեստանյան իր պատմությունը կոչեց «Պատմություն Յայոց»: 4-րդ և 5-րդ դարի խոշոր պատմագիրներից մյուսը՝ Փավստոս Բուզանդը ևս իր նշանավոր երկը վերնագրեց «Պատմություն Յայոց»: Կամ Ղազար Փարպեցին (5-րդ դար) դարձյալ «Պատմություն Յայոց»:

Թվարկումները կարող ենք շարունակել, բայց կարիք չկա, քանի որ (ինչպես տեսնում ենք), մեր խոշորագույն պատմագիրները նախապատվությունը միանշանակ տվել են «Յայոց» բառին: Լեզվական առումով ևս «Յայոց» բառը չպետք է խրոստեցնի: Յայե՛ք բառի սեռական հոլովը՝ Յայոց բառը նույնական է Յայաստանի և Յայեթի բառերի հետ: Ուրեմն՝ ինչո՞ւ հրաժարվել Յայոց բառից, երբ այդ բառն իր մեջ կրում է Յայաստանի իմաստը նույնպես: Իսկ Յայե՛ք բառը մեր աշխարհի անունն է, որը տրվեց Յայկ Լահապատի կողմից՝ Բեյլիս սպանելուց հետո: Եվ, այդ բոլորով հանդերձ, եթե անպայման ուզում ենք օգտագործել «Յայաստանի պատմություն» արտահայտությունը, ապա պարտավոր ենք սկզբից և եթե ճշտում կատարել առանցքային մեկ հարցում նույնպես:

Ի՞նչ ասել է Յայաստան՝ աշխարհագրական իմաստով: Բացեք բոլոր հանրագիտարանները, բառարանները՝ Յայաստան նշանակում է Յայե, Յայոց աշխարհ, Յայոց բնաշխարհ՝ երկիր, որտեղ հայ ժողովուրդը ձևավորվել է անցել է պատմական զարգացման բոլոր փուլերը:

Իսկ որտե՞ր է հայ ժողովուրդը ձևավորվել և անցել պատմական զարգացման բոլոր փուլերը: Նեղություն քաջեք և ծանոթացեք «Աշխարհացոյցին» (6-7-րդ դարեր), մի քիչ էլ ծանոթացեք Վարդան Արևելցու «Աշխարհացոյցին» (13-րդ դար), ծանոթացեք Կալիկոս Գրիգորյանի (90-168 թվականներ) «Աշխարհագրությանը», աշխարհագրական, վարչաքաղաքական այլ կյուրերի ու կատանաք հարցի ստույգ և անվիճելի պատասխանը:

Այստեղ առաջ է գալիս լրջագույն մի նոր հարց՝ Սփյուռքի պատմությունը տե՞ր է գտնելու առաջարկվող դասագրքում, չե՞ որ առանց Սփյուռքի պատմության հնարավոր չէ պատկերացնել հայ ժողովրդի պատմության որևէ դասագիրք՝ ինչ անուն էլ որ ունենա:

Եվ իբրև ամփոփում մեր տեսակետի. ըստ պատշաճի ու գիտականորեն չի հիմնավորվում, թե ինչու պետք է «Յայոց պատմությունը» վերանվանվի «Յայաստանի պատմություն»:

Մեր առաջարկությունը.

- հարցը հանել օրակարգից և դադարեցնել դրա շուրջ քննարկումները,
- եթե, այնուամենայնիվ, հարցը պիտի մնա օրակարգում և քննարկվի, ապա պետք է խնդր առարկայի քննարկումն ամբողջապես դուրս բերվի կուսակցական և սիրողական հարթակներից ու տեղափոխվի միայն գիտական միջավայր,
- եթե իսկապես այս նախաձեռնության հեղինակները մի խումբ մանկավարժներ են ու եթե գաղտնիք չէ նրանց անվանացանկը, ապա բոլորին սիրով հրավիրում ենք Սյունիք՝ բաց բանավեճի, անկեղծ քննարկման. կրկնում ենք՝ այստեղից ամեն ինչ ավելի տեսանելի է:

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ. «Պատմության ինստիտուտից որևէ աշխատակից նման առաջարկով հանդես չի եկել»



Հունվարի 14-ին Գավառում տեղի ունեցած ՔԳՄ նախաձեռնող նիստի ժամանակ Լիկո Փաշինյանն ասել էր, որ մի խումբ մանկավարժներ, գիտնականներ դիմել են ԿԳՄՍ նախարարությանը՝ առաջարկելով «Յայոց պատմություն» առարկան դարձնել «Յայաստանի պատմություն»:

«Վերջերս իմացա, որ մի խումբ մանկավարժներ կամ գիտնականներ դիմել են ԿԳՄՍ-ին՝ առաջարկելով «Յայոց պատմություն» առարկան վերանվանել «Յայաստանի պատմություն»: Անկեղծ ասած, այս առաջարկն ուղղակի ցնցեց ինձ: Ես ինքս իմն մեղադրեցի, որ ես այս նրբությունը չեմ նկատել, որովհետև թվում է, թե սա ի՞նչ բանավեճ է՝ «Յայ ժողովրդի պատմություն», թե՛ «Յայաստանի պատմություն», իսկ այդտեղ խորթախի, բովանդակային շատ լուրջ տարբերություն կա», – ասել էր Լիկո Փաշինյանը:

168.am-ը ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, պատմաբան Աշոտ Մելքոնյանից հետաքրքրվեց՝ տեղեկություններ ունի՞, թե Պատմության ինստիտուտից որևէ գիտնական նման առաջարկով դիմել է ԿԳՄՍ-ին: Որպես պատմաբան-գիտնական՝ ինչպե՞ս կմեկնաբանի, ըստ Փաշինյանի՝ ԿԳՄՍ-ին արված այդ առաջարկը:

Աշոտ Մելքոնյանի խոսքով՝ Պատմության ինստիտուտից որևէ աշխատակից նման առաջարկով հանդես չի եկել, տեղեկություններ չունի, թե ովքեր են այն գիտնականները, որոնք արել են այդ առաջարկը:

«Խնդիրն այն է, որ գրաբարով «հայոց պատմությունը» նշանակում է ոչ միայն հայերի պատմություն, այլև՝ Մեծ և Փոքր Յայեթի պատմություն: «Յայոց» բառի իմաստը գործածվում է Մեծ ու Փոքր Յայեթի՝ «Armenia Maior, Armenia Minor», այսինքն՝ հունաստերակա արջուրներով հիշատակվող տարբերակ: Դրա համար 5-րդ դարից մեր պատմիչները գործածում են «Յայոց պատմություն»:

Նեոսակարա, երբ մենք ասում ենք՝ «Յայաստանի պատմություն», դրանով սփյուռքեցի այդ պատմությունից ամբողջապես դուրս ենք թողնում: «Յայոց» բառը միաժամանակ նշանակում է հայերի պատմություն, ընդ որում՝ «հայոց պատմություն» տարբերակը ռուսերենով թարգմանվում է ոչ թե հայերի պատմություն, այլ՝ Յայաստանի պատմություն: Այսինքն՝ հայոց պատմությունը նշանակում է նաև հայերի պատմություն», – նշեց Աշոտ Մելքոնյանը:

Ինչ վերաբերում է հայ ժողովրդի պատմությանը, բնականաբար, այն խորհրդային տարիների տերմին է և պետք է փոխվի «հայոց պատմություն» տարբերակով, որն ավանդաբար՝ Խորենացուց, Ազարկեստանյանից, Փավստոս Բուզանդից մինչև Սիբայել Զամչյան և ներկա հեղինակներ, այդ տարբերակը գործածել են:

«Կրկնում եմ՝ հայոց պատմություն տարբերակն ինքնին նշանակում է նաև Յայաստանի պատմություն: Ուղղակի պատմաբան չինելու հանգամանքը որոշ մարդկանց կարող է մոլորության մեջ գցել, որ խոսքը վերաբերում է զուտ հայերի պատմությանը: Յայոց պատմությունն իր մեջ ներառում է երկու իմաստ՝ երկու Յայաստանների մասին է՝ մեծ և փոքր, և հայերի պատմության, որը ներառում է ամբողջ գաղղթասիայությունը ու սփյուռքը: Պետք է այս խնդիրը բացատրվի, որպեսզի հասկանալի», – եզրափակեց Աշոտ Մելքոնյանը:

Էրուարդ Բեգոյանի հավաստմամբ՝ Խոտ-Որոտան ճանապարհի կառուցումը կավարտվի 2024-ի հոկտեմբերին, եթե ոչ շուտ

Դեկտեմբերի 23-ին հերթական անգամ ծանոթացանք Խոտ-Որոտան ճանապարհի կառուցման ընթացքին...

Այդ ճանապարհի կառուցման անհրաժեշտությունն առաջացավ այն ժամանակ, երբ թուրք-ազերիները 2021-ի աշնանը շրջափակեցին Մ-2 մայրուղու Գորիս-Կապան ճանապարհի՝ այսպես կոչված Եվազլարի հատվածը: Գորիս-Կապան ճանապարհի կառուցման առաջնությունը ստանձնեց «Ճանապարհ» ՍՊ ընկերությունը, որի տնօրենն է հանրապետությունում ճանաչված ճանապարհաշինարար, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էրուարդ Բեգոյանը:



Ճանապարհի կառուցման ընթացքին ծանոթանալիս (23.12.2023 թ.) մեզ ընկերակցում էին Խոտ գյուղի վարչական ղեկավար Մարտիրոս Գրիգորյանը և ճանապարհաշինական այդ ծրագրի շինաշխատանքների ղեկավար Գինեվան Ղազարյան հմուտ և փորձառու ճանապարհաշինարարը:
Այցելությունից հետո՝ դեկտեմբերի 25-ին, գրուցեցինք «Ճանապարհ» ՍՊ ընկերության տնօրեն Էրուարդ Բեգոյանի հետ:
– **Պարոն Բեգոյան, շաբաթ օրը մեր ստեղծագործական խումբը Խոտ-Որոտան կառուցվող ճանապարհի շինարարականներում էր, տպավորված ենք: Մենք կանդիդատանք այդ աշխատանքներին, իսկ մինչ այդ...**
2021-ի սեպտեմբերի 27-ից մեկնարկել է ճանապարհի կառուցումը, սակայն համապատասխան կազմակերպություններն այդպես էլ չեն հասցրել պարզեցումներ և փոփոխություններ: Չէ՞ որ ճանապարհի կառուցումից հետո նախկին ավանդական առունների մի մասը մնացել է ճանապարհի տակ: Արդյո՞ք ձեր կազմակերպությունն է լուծելու այդ հարցը, թե՞ համայնքային ծրագրերով պետք է կարգավորվի ոռոգման ջրի մատակարարման հարցը:



Էրուարդ Բեգոյան / «Ճանապարհ» ՍՊ ընկերության տնօրեն, հանրապետությունում ճանաչված ճանապարհաշինարար, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

– Սկզբնապես նախատեսված էր ճանապարհը կառուցել մոտ մեկ տարվա ընթացքում. մեր կազմակերպությունն այդ հնարավորությունն ուներ, բայց...
Խիստ կտրտված լեռնային այդ տեղանքում բանիցս երկրաբանական երևույթներ ի հայտ եկան՝ սողանքներ, քարաթափումներ, նաև սելավներ եղան: Այդ հանգամանքներն էլ անդրադարձան շինարարության ընթացքի վրա: Առաջացած խնդիրները լուծելու համար պետական հանձնաժողով կազմվեց, սակայն մինչև հիմա վերջնական լուծումներ չեն գտնվել 8-րդ կիլոմետրից մինչև Որոտան ընկած ճանապարհահատվածի համար: Իսկ այն հատվածներում, որտեղ արդեն մեծ ելան, ճանապարհի արդեն իսկ ասֆալտապատել ենք, նկատի ունեն 7-8-րդ կիլոմետրում գտնվող կապտածից մինչև Խոտ գյուղի մուտք:

այն պետք է վերանորոգվի: Դա, իհարկե, ջրերի հետ կապված խնդրի կարգավորման ուղիներից մեկն է, որի լուծման դեպքում ջրերի հոսքը կմեղմանա: Բայց այնտեղ կարող են լինել նաև այլ աղբյուրներից եկող կամ տեղումներից, ձևափոխ առաջացող ջրերի հոսքեր, ինչը նույնպես պետք է նկատի ունենալ:
– **Ի՞նչ տարածքային հատվածում և ենթակառուցվածքների նախարարությունն ու «Ճանապարհային ղեկարարամենտ» հիմնադրամը վերոնշյալ հարցերը կարգավորելու համար աշխատանքային խումբ կամ հանձնաժողով են կազմավորել, որի անդամներն էլ եղել են ճանապարհի խնդրահարույց հատվածում...**

Ի վերջո ի՞նչ եզրահանգման է եկել աշխատանքային այդ խումբը, չէ՞ որ ամիսներ են անցել:
– Խոսքը, բնականաբար, 8-րդ կիլոմետրից մինչև Որոտան ընկած ճանապարհահատվածի մասին է: Խնդրի լուծման առաջին տարբերակն է՝ փլվածքային տեղերը վերականգնել, որը մեծ ծավալի, նաև վտանգավոր աշխատանքներ է ենթադրում:
Մյուս տարբերակն էլ ներկայումս գործող ճանապարհի վերակառուցումն է: Իհարկե, այդտեղի մեջ չենք մտնի: Ինքս այդ տարբերակի համար շատ սիրուն նախագիծ են մշակել, որը բնակչության փոքր մասն է տալիս: Նախագծային աշխատանքներում որոշակիություն մտցնելուց ու վերջնական որոշում կայացնելուց հետո աշխատանքները կշարունակվեն:
Խնդրի լուծման երկրորդ տարբերակը, որը միակ ողջամիտ տարբերակն է համարում, իմ առաջարկությունն է: Ես այն անվանել եմ «խիսունջ», այսինքն՝ ճանապարհը գալարներով գալիս և իջնում է՝ առանց այգի-

ների վնաս պատճառելու: Ինքս հավան էմ խնդրի լուծման երկրորդ տարբերակին: Իսկ եթե հանձնաժողովն այլ տարբերակ առաջարկի՝ ես դրա տակ չեմ ստորագրի:

– **Ճանապարհի այն հատվածը, որտեղ Որոտան գյուղի օրվա կարգավորիչ ջրամբարն է, նորից խոնավացած է: Ի՞նչ լուծում եք պատրաստվում տալ այդ հատվածին՝ ջրամբարը տեղափոխել, թե՞ նորը և ժամանակակից կառուցել, որից ջրի արտահոսք չի լինի:**
– Որոտան գյուղի օրվա կարգավորիչ ջրամբարի կամ կապտածի խնդիրը բնարկվել է...
Խոտից մինչև Որոտան՝ ուղիղ գծով, 3.5 կմ է, այնպես որ՝ Խոտից կարող ենք խմելու ջրով ապահովել Որոտան գյուղի բնակիչներին: Ներկայումս գործող կապտածը ճանապարհից 6 մ բարձրության վրա է: Տակը քանդված է, գերիտեսակցած գրունտն իմ աչքի առաջ է տեսնվում արդեն...
Այդ վիճակում կապտածը երկար կյանք չի կարող ունենալ: Ուստի և առաջարկվել է գործող կապտածը քանդել ու փոխարենը նորը կառուցել՝ ճանապարհի մակերևույթից ցածր՝ դեպի ձորակ:

եղաբարի, վաբերի և տարբեր տիպի խողովակների տեղադրում: Իսկ մինչև հիմա ամբողջապես փոխել ենք կոյուղին:

– **Սեր նախորդ գրույցներից մեկում ասել էիք, որ կառուցվել են մակերևույթից ոչ շատ խորը, մեզ խանգարում են, ուստի և դրանք (մուտքային ջրագծերը) նույնպես փոխվում են առանձին-առանձին: Այդ փողոցը մոտ 400 գծամետր երկարություն ունի. մենք օրական 1 կիլոմետր ճանապարհ ենք ասֆալտապատում, ասելս այն է, որ այդ հատվածում որևէ խնդիր չի լինի:**
– **Խոտ-Որոտան ճանապարհի շրջակայքում կա մոտ 25 հա այգետարածք, ավելի սուսյգ՝ գյուղի 140 ընտանիքից յուրաքանչյուրն այնտեղ այգի ունի, ասել է թե՛ ոռոգման ջրի խնդիր է առաջացել: Չէ՞ որ ճանապարհի կառուցումից հետո նախկին ավանդական առունների մի մասը մնացել է ճանապարհի տակ: Արդյո՞ք ձեր կազմակերպությունն է լուծելու այդ հարցը, թե՞ համայնքային ծրագրերով պետք է կարգավորվի ոռոգման ջրի մատակարարման հարցը:**

– **Խոտ գյուղում, որբանով տեղեկացանք, ասֆալտբետոնի արտադրության գործարան եք տեղադրել՝ ժամում 60-80 տ արտադրողականությամբ: Բայց այս ընթացքում օրական մոտ 1000 տ ասֆալտ էիք տեղադրում: Ենթադրում ենք՝ այլ կազմակերպություններից եք ասֆալտը ձեռք բերել:**
– Այո, մենք առավելագույնս ենք օգտագործել մեր գործարանի հնարավորությունը: Բայց որպեսզի կարողանայինք ժամանակին ավարտել ասֆալտապատման աշխատանքները, համագործակցել ենք «Ումար» և «Սիսիանի ԲՈՒՍ» ընկերությունների հետ:
Մոտ 10 կմ երկարությամբ ճանապարհի 6.6 կիլոմետրանոց հատվածն արդեն ասֆալտապատված է:
Դեկտեմբերի 9-ից մինչև հիմա հասցրել ենք տեղադրել ասֆալտբետոնի և՛ առաջին, և՛ երկրորդ շերտը:

– **Նախ՝ ոչ մի առու չի մնացել ճանապարհի տակ: Այդքանով հանդերձ՝ գյուղի վարչական ղեկավարին ասել եմ՝ համայնքին մտահոգող ցանկացած հարց, որ առնչվում է մեր գործունեությանը, պատրաստ ենք լուծելու:**
Խոտը սահմանափակ գյուղ է, և կարևոր այդ հանկարծակիք մեք հաշվի ենք առնում...
Չիմա կա ծրագիր՝ Տաթև հեկի օրվա կարգավորիչ ջրամբարի կողքից սկսած, որի համաձայն այգիների ոռոգման համակարգը կկարգավորվի, լուծել և լուծում ենք նաև մայրուղուն մոտեցող ճանապարհների հարցը:

– **Մեր նախորդ գրույցներից մեկում ասել էիք, որ կա Գորիս-Խազկազ կամ Գորիս-Տաթև կառուցման նախագիծ, որի իրագործման դեպքում Գորիսից հնարավոր կլինի միանալ Խոտ-Որոտան ճանապարհին, որտեղից էլ՝ Մ-2-ին: Արդյո՞ք այդ ծրագիրն ուժի մեջ է կամ պահպանում է իր հրատապությունը:**
– Այդ առաջարկությունն ինքս եմ արել, նախագիծն էլ պատրաստ է, ինչքո՞ւ աշխատանքները չսկսել: Աշխատանքները չսկսելու պատճառներից մեկը, կարծում եմ, այն է, որ (ինչպես նշեցի) Խոտ-Որոտան կառուցվող ճանապարհի խնդրահարույց հատվածում դեռևս որոշակիություն չկա:
Ձեր նշած ճանապարհը շատ կարևոր է, նույնիսկ ավելի կարևոր, քան Սյունիքում մինչև հիմա կառուցված կամ կառուցվող որևէ այլ ճանապարհ: Կարծում եմ՝ դրա համար նոր միջոց չի հայտարարվի, կասեն՝ գնացեք և կառուցեք, ձեռագիրը չպետք է փոխվի:
– **Մի հարց ևս, որը թեև ուղղակիորեն Ձեզ չի առնչվում, բայց, կարծում ենք, տեղեկություններ կունենաք. Խոտ-Որոտանը գործարկելու դեպքում հնարավոր համարում եք Մ-2 մայրուղով**

– **Մեր նախորդ գրույցներից մեկում ասել էիք, որ կա Գորիս-Խազկազ կամ Գորիս-Տաթև կառուցման նախագիծ, որի իրագործման դեպքում Գորիսից հնարավոր կլինի միանալ Խոտ-Որոտան ճանապարհին, որտեղից էլ՝ Մ-2-ին: Արդյո՞ք այդ ծրագիրն ուժի մեջ է կամ պահպանում է իր հրատապությունը:**
– Այդ առաջարկությունն ինքս եմ արել, նախագիծն էլ պատրաստ է, ինչքո՞ւ աշխատանքները չսկսել: Աշխատանքները չսկսելու պատճառներից մեկը, կարծում եմ, այն է, որ (ինչպես նշեցի) Խոտ-Որոտան կառուցվող ճանապարհի խնդրահարույց հատվածում դեռևս որոշակիություն չկա:
Ձեր նշած ճանապարհը շատ կարևոր է, նույնիսկ ավելի կարևոր, քան Սյունիքում մինչև հիմա կառուցված կամ կառուցվող որևէ այլ ճանապարհ: Կարծում եմ՝ դրա համար նոր միջոց չի հայտարարվի, կասեն՝ գնացեք և կառուցեք, ձեռագիրը չպետք է փոխվի:
– **Մի հարց ևս, որը թեև ուղղակիորեն Ձեզ չի առնչվում, բայց, կարծում ենք, տեղեկություններ կունենաք. Խոտ-Որոտանը գործարկելու դեպքում հնարավոր համարում եք Մ-2 մայրուղով**

– **Մեր նախորդ գրույցներից մեկում ասել էիք, որ կա Գորիս-Խազկազ կամ Գորիս-Տաթև կառուցման նախագիծ, որի իրագործման դեպքում Գորիսից հնարավոր կլինի միանալ Խոտ-Որոտան ճանապարհին, որտեղից էլ՝ Մ-2-ին: Արդյո՞ք այդ ծրագիրն ուժի մեջ է կամ պահպանում է իր հրատապությունը:**
– Այդ առաջարկությունն ինքս եմ արել, նախագիծն էլ պատրաստ է, ինչքո՞ւ աշխատանքները չսկսել: Աշխատանքները չսկսելու պատճառներից մեկը, կարծում եմ, այն է, որ (ինչպես նշեցի) Խոտ-Որոտան կառուցվող ճանապարհի խնդրահարույց հատվածում դեռևս որոշակիություն չկա:
Ձեր նշած ճանապարհը շատ կարևոր է, նույնիսկ ավելի կարևոր, քան Սյունիքում մինչև հիմա կառուցված կամ կառուցվող որևէ այլ ճանապարհ: Կարծում եմ՝ դրա համար նոր միջոց չի հայտարարվի, կասեն՝ գնացեք և կառուցեք, ձեռագիրը չպետք է փոխվի:
– **Մի հարց ևս, որը թեև ուղղակիորեն Ձեզ չի առնչվում, բայց, կարծում ենք, տեղեկություններ կունենաք. Խոտ-Որոտանը գործարկելու դեպքում հնարավոր համարում եք Մ-2 մայրուղով**



Օրվա խորհուրդն էր Մեծ հայրենական տարիներին Լենինգրադի 900-օրյա բլոկադայի ապաշրջափակման 80-րդ տարեդարձը

Ռուսաստանի Դաշնության ԱԳՆ ներկայացուցիչներն այցելել են «Սյունյաց երկիր» խմբագրություն

Ռուսաստանի Դաշնության ԱԳՆ նախարարության առաջատար խմբի ղեկավար Սերգեյ Զաչչիխինը և առաջատար խմբի 3-րդ քարտուղար Վլադիմիր Շիրյանը հունվարի 10-ին այցելել են «Սյունյաց երկիր» խմբագրություն:

Պարբերականի խմբագիր Սամվել Ալեքսանյանի հետ հանդիպման ժամանակ Սերգեյ Զաչչիխինը ներկայացրել է տեղեկություններ Կապանում Ռուսաստանի Դաշնության գլխավոր հյուպատոսության բացման ուղղությամբ տարվող աշխատանքների ընթացքի, ինչպես և տարածաշրջանի ստեղծագործական ու գործարար շրջանակների ներկայացուցիչների հետ առաջատար խմբի շփումների մասին:

Ռուս դիվանագետը տեղեկություններ է հաղորդել նաև հայ-ռուսական առևտրատնտեսական ու հումանիտար-վշակության հարաբերությունների մասին: Սամվել Ալեքսանյանը հյուրերին ծանոթացրել է «Սյունյաց

երկիր» թերթի և «Սյունյաց երկիր. վշակության» եռամսյա հանդեսի գործունեությանը, այդ լրատվամիջոցների անցած ճանապարհին: Խմբագիրն ընդգծել է նաև հայ-ռուսական հարաբերությունների ներկա ընթացքին առնչվող մի շարք հարցերի վերաբերյալ հավելյալ պարզաբանումների անհրաժեշտությունը:

Երկուստեք կարևորել են Սյունիքի մարզի հետ հոգևոր-վշակության կապերի հետագա ամրապնդումը: Սամվել Ալեքսանյանը Սերգեյ Զաչչիխինին է նվիրել «Սյունյաց երկիր. վշակության» հանդեսի՝ աշխարհահռչակ Արամ Խաչատրյանին նվիրված բացառիկ համարի օրինակը:

Հանդիպմանը մասնակցել են նաև «Սյունյաց երկիր» թերթի խմբագրի տեղակալ Վահրամ Օրբելյանը և «Русский дом»-ի՝ Սյունիքի մարզում նախագծերի համակարգող Լյուդմիլա Աղախանյանը:

Յայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Կապանի մասնաճյուղում հունվարի 22-ին հյուրընկալվել էին դիվանագետներ՝ Կապանում Ռուսաստանի Դաշնության հյուպատոսության բացումը նախապատրաստող առաջատար խմբի ղեկավար Սերգեյ Զաչչիխինը, առաջին քարտուղար Եվգենի Զարյուտին, երրորդ քարտուղար Վլադիմիր Շիրյանը: Մասնաճյուղի տնօրեն, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լեռնիկ Պետրոսյանը ներկայացրեց մասնաճյուղի առօրյան, նաև որոշ հիմնախնդիրներ:

Մասնաճյուղի դահլիճում հումանիտար առարկաների և մարմնակրթության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, մանկավարժական գիտությունների թեկնածու Քրիստինա Մարգարյանն անդրադարձավ օրվա խորհրդին՝ Մեծ հայրենական տարիներին Լենինգրադի 900-օրյա բլոկադայի ապաշրջափակման 80-րդ տարեդարձին: Մասնաճյուղի տնօրեն Լեռնիկ Պետրոսյանը զուգահեռներ

անցկացրեց Լենինգրադի շրջափակման և Արցախի հայաթափման միջև այն համատեքստում, որ մարդկության հանդեպ բարբարոսությունների վերջ պիտի տրվի:

«Русский дом»-ի Սյունիքի մարզում նախագծերի համակարգող Լյուդմիլա Աղախանյանը ներկայացրեց Լենինգրադի բլոկադայի մասնակից իր մոր՝ Գայինա Բորիսովնա Աղախանյանի հուշերը՝ շրջափակված բաղաբուն ապաստանած մարդկանց ծանր ու անտանելի օրերի մասին: Օրվա խորհրդին պատշաճող խոսքեր հնչեցրին Ս. Զաչչիխինը և Վ. Շիրյանը՝ դատապարտելով մարդկության հանդեպ իրականացվող յուրաքանչյուր ոճիր: Այնուհետև ցուցադրվեց ֆիլմ «Ժամանակավոր կապ» խորագրով, որ առնչվում էր օրվա թեմային:

Հայտնի դարձավ նաև, որ աշակերտության շրջանում անցկացվելու է միկտորինա, որում ներառված հարցերը վերաբերելու են Լենինգրադի շրջափակմանը:

ՎԱՐՄԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Գործա-Կապան տրանսպորտային հաղորդակցության վերականգնումը:

– Համոզված եմ այդպես էլ կլինի: Իհարկե, Թասի լեռնանցքի որոշ ոլորտներում ուղղման աշխատանքների կարիք կա, ինչը պետք է կատարվի: Այո, մենք «դատապարտված» ենք վերականգնելու Մ-2 մայրուղու Գործա-Կապան հատվածի լիարժեք շահագործումը, հակառակ դեպքում՝ անցանկալի հետևանքների կբախվենք:

– 2021-ի սեպտեմբերից հետո, երբ մեկնարկեց Նոտ-Ռոտանի կառուցումը, մի քանի անգամ (հասկանալի պատճառով) ճանապարհի գործարկման-շահագործման ժամկետը փոփոխության ենթարկվեց: Գոնե հիմա երևում է շինարարական աշխատանքների վերջնաժամկետը:

– Մենք տեսնում ենք շինաշխատանքների վերջնաժամկետը, վատագույն դեպքում աշխատանքները կավարտենք 2024-ի հոկտեմբերին, եթե ոչ շուտ: Հակառակ դեպքում մեր ընկերությունը կանակաճանաչվի:

– Ճանապարհաշինարարների մեջ նաև Արցախից բռնության տեղահանված մեր եղբայրներին հանդիպեցինք՝ 6-7 հոգու... Պահանջել է...

– Դառն իրականության մեջ ենք հայտնվել, բոլորս՝ անկախ դիրքից և հնարավորությունից, պարտավոր ենք հնարավոր ամեն ինչ անել, որպեսզի մեր հայրենակիցների հոգը շատ թե քիչ թեթևացնենք: Պետք է օգնություն ցուցաբերենք, որպեսզի նրանք կարողանան ուղի կանգնել ու մեր հայրենիքի հզորացման համար իրենց լուրջ ներդրեն:

Մյուս կողմից՝ մեր հասարակությունը պետք է գիտակցի, որ փոքրիկ Հայաստանը տարածաշրջանների բաժանելով ազգակործան քայլ ենք կատարում...

Յուրաքանչյուր ոք, ով ցանկանում է աշխատել, մենք պատրաստ ենք ընդունել, որպեսզի նրանք կարողանան ինտեգրվել իրենց

համար նոր իրականությանը: Քիչ առաջ ինձ մտնում զոհված ընտանիքների ներկայացուցիչներ կային՝ Արցախից, որոնց ես օգնություն եմ ցուցաբերում, մոտ 300 ընտանիքի օգնություն ենք ցուցաբերել...

– Ձեր գլխավորած ընկերությունը 2022 թ. օգոստոսի 3-ից մինչև 2023 թ. հունիսի 15-ը մասնակցում էր Նաև Լաչինի միջանցքի նոր երթուղու՝ Կորնիձոր-Հագարի կամուրջ՝ ամենադժվարին 2,5 կմ երկարությամբ հատվածի կառուցմանը: Տեղյակ ենք՝ 2023-ի հունիսի 15-ին, երբ Ձեր կազմակերպության շինարարները փորձեցին Հագարի կամուրջի արևմտյան կողմում տեղադրել վահանակ՝ «Հայաստանի Հանրապետություն, Սյունիքի մարզ» գրառմամբ, թշնամին կրակ բացեց շինարարների ուղղությամբ...

Թվում է՝ երբեք չէք մոռանա այդ միջադեպը, մանավանդ որ դրանից հետո վերջնականապես փակվեց միջանցքը: Կարծում եմ նաև՝ Ձեզ երբեք չի լքի ափսոսանքի, ցավի զգացումը՝ մեծ դժվարություններով ճանապարհ եք կառուցել, որն այլևս չի ծառայում իր նպատակին...

– Դոքա ճիշտ եք ելնադրում և վերաբերվում մեր մտածումները տեղի ունեցածի վերաբերյալ, համաձայն չեմ միայն «այլևս» բառի հետ: Հայ ժողովուրդը դարերի ընթացքում շատ-շատ փորձությունների է ենթարկվել, բայց և կարողացել է միավորվել, ուժեղանալ ու նորովի հանել...

Հավատում եմ, որ այդ ճանապարհը նորից ծառայելու է իր նպատակին:

– Մեր զրոյցը տեղի է ունենում Նոր տարվա և Սուրբ Ծննդյան տոների նախօրեին, ինչ կփոխանցեք Սյունյաց աշխարհի բնակիչներին...

– Տոնակները, Լոճեհի պատգամներին հավատարմություն...

Շնորհավոր նոր տարի և Սուրբ Ծնունդ: **ՉՈՒՅՑԸ՝ ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**



Խոշոր ներդրում Գործիսում

«Հայաստանի մանուկներ» հիմնադրամը Գործիսում կառուցելու է ԶՈԱՖ Սմարթ կենտրոն: Ծրագրի պատասխանատուները Գործիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանին և համայնքապետարանի աշխատակիցներին ներկայացրել են ծրագրի բովանդակությունը, սպասվելիք գործողությունները:

ԶՈԱՖ Սմարթ կենտրոնի կառուցման համար համայնքն արդեն հողատարածք է տրամադրել ֆուտբոլի մարզադաշտի հարևանությամբ: Կենտրոնը կունենա կրթական, վշակույթային, մարզական, նաև գյուղատնտեսական ու սոցիալ-ձեռնարկատիրական բաղադրիչներ:

Ավելի քան 6000 երեխա ու երիտասարդ հնարավորություն կունենան ներգրավվել ամենատարբեր կրթական ծրագրերում՝ օտար լեզուներ, ձեռներեցություն, ճարտարագիտություն, աթլետիկա և այլ ուղղություններում: Հասանելի կլինեն նաև սոցիալական և հոգեբանական անվճար ծառայություններ, միջազգային փորձագետները կանցկացնեն դասընթացներ:

Կենտրոնի կառուցապատման համար հայտարարվել է ճարտարապետի մրցույթ. նախագծի վրա կաշխատեն միջազգային և տեղացի ճարտարապետները՝ պահպանելով

Գործիսի բնորոշ կոլորիտն ու ճարտարապետական տեսքը՝ չխախտելով բնական լանդշաֆտը:

Սմարթ կենտրոնը գործելու է անվճար: Բնակավայրերի երեխաների տեղափոխությունը ևս կլինի անվճար. այդ հարցում իր մասնակցությունը կունենա նաև համայնքը (Գործիսի սահմանամերձ բնակավայրերում այժմ էլ հանրային տրանսպորտն անվճար է):

Սմարթ կենտրոնի կառուցման ծրագրում ներառված է նաև ֆուտբոլի դաշտի կապիտալ նորոգումը, այդ թվում՝ նոր մարզահրապարակների ստեղծումը:

Վարարակն գետի հարակից ենթակառուցվածքները ևս կբարելավվեն, նաև կկահավորվեն գետամերձ տարածքները:

Համայնքային միջոցներով կհիմնանորոգվեն դեպի Սմարթ կենտրոն տանող ճանապարհները. դեպի Հին Գործիս ճանապարհի կապիտալ նորոգման աշխատանքները կմեկնարկեն առաջիկայում:

Ծրագրի ղեկավարները և Առուշ Առուշանյանը հանդիպումից հետո շրջայց են կատարել Գործիս համայնքում, այցելել են վշակույթային հաստատություններ, թանգարան, պատմամշակութային վայրեր:

23 ՅՈՒՆԻՎԵՐՍԻ 2024 Թ.

ԼՂ-ից բռնի տեղահանվածների աշխատանքի տեղավորման ծրագիրը ՀՀ կառավարությունը հաստատեց



ԼՂ-ից բռնի տեղահանվածների աշխատանքի տեղավորման ծրագիրը ՀՀ կառավարությունը հաստատեց: Կառավարության հունվարի 11-ի նիստի ժամանակ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Լարսե Արսլանյանը հայտարարեց, որ ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց համար զբաղվածության ծրագրի իրականացման միջնաժամկետ փուլ են արդեն մտել: Ըստ նախարարի՝ ծրագիրն ունի ինչպես մարդկային կապիտալի զարգացման, այնպես էլ զբաղվածության բովանդակություն:

Լա Նշեց, որ ծրագիրն ունի երեք բաղադրիչ՝ 1. մասնագիտական ուսուցում, որից հետո առկա են 3 ամիս աշխատանքի ապահովման պայմանով, 2. վճարովի պրակտիկա, որից հետո պարտադիր աշխատանքի տեղավորում՝ առկա են երեք ամիս, 3. բոլորը միասին՝ գումարած աշխատանք:

Լա Նշեց, որ ծրագիրն ունի երեք բաղադրիչ՝ 1. մասնագիտական ուսուցում, որից հետո առկա են 3 ամիս աշխատանքի ապահովման պայմանով, 2. վճարովի պրակտիկա, որից հետո պարտադիր աշխատանքի տեղավորում՝ առկա են երեք ամիս, 3. բոլորը միասին՝ գումարած աշխատանք:

50 հազար դրամ կրթաթոշակ և ևս 50 հազար դրամ՝ ուսման վարձը վճարելու: Երբ անձը կներկայացնի վկայականը, որ անցել է կրթական փուլը, նրա հետ գործատուն առկա են երեք ամիսով կվեքի աշխատանքային պայմանագիր: Երբ ամսվա ընթացքում ՀՀ կառավարությունը գործատուին կփոխանցի 50 հազար դրամ՝ տվյալ անձի հարկերի փոխհատուցման համար: Եթե գործատուն աշխատանքային պայմանագիր չկնքի կամ մինչ 3 ամիսը լրանալը լուծարի պայմանագիրը, ապա գործատուն կփոխհատուցի անձի կրթաթոշակի ու ուսման վարձի՝ պետության կողմից տրամադրված գումարը:

Երկրորդ ծրագրով նախատեսվում է գործատուին ու անձի միջև կնքել մինչև 6 ամիս ժամկետով աշխատանքային պայմանագիր, որից երեք ամիսը պարտադիր կոնսուլտացիոն կազմակերպչի կողմից կառավարության կողմից վճարվելու է առավելագույնը 50 հազար դրամ՝ պարտադիր հարկերը վճարելու համար: Աշխատանքային պայմանագիրը մինչև վեց ամիս լրանալը լուծարելու դեպքում գործատուն պարտավորվում է ամբողջությամբ վերադարձնել աշխատանքային փորձառության ժամանակ իրեն տրամադրված գումարից՝ շահառուին որպես աշխատավարձ վճարած գումարը:

Երրորդ ծրագիրը ներառում է առաջին երկու ծրագիրը միասին: Նախարար Արսլանյանը հայտարարեց, որ այս ծրագիրն արդեն իսկ փորձարկված է:

«Մենք 2016-20 թթ. ռազմական գործողությունների և մասնակցած մեր զինվորների համար այս ծրագիրն իրագործել ենք: 3ետևել ենք ավելի քան մեկ տարի ու տեսել ենք, որ մեր ծրագիրը շահառուների ավելի քան 70 տոկոսը շարունակվում է մնալ աշխատանքային»,- վստահեցրեց նախարարը:

Նիկոլ Փաշինյանի համար անհասկանալի էր՝ եթե ՄԿԻՄ-ների մասին օրենքով նախատեսված է երաշխավորված վեցամյա ծրագրեր, ապա ինչու է այս որոշման մեջ գրված ինչ ինչ կրթական վերապատրաստում: Արդյունքում որոշումն ընդունվեց՝ «կրթական պրակտիկայի վեց ամիս ժամկետով անցնել» ձևակերպմամբ:

11 ՀՈՒՆՎԱՐԻ 2024Թ.



Արցախի հայաթափումը որակվեց ցեղասպանություն

Մ.Օ.Ս.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի նախաձեռնությամբ եւ նախագահությամբ գումարված «Կիլիկիա Վերլուծական Հարթակ»-ի երկրորդ նիստերը ավարտվեցին: Այդ մասին հայտնում են Կիլիկիայի կաթողիկոսարանից:

«Առկա հարթակը, որ մինչ այժմ ունեցած է առցանց եթեր նիստեր, ներառած էր հայկական առումով ընդլայնված աշխարհագրությամբ. արդարեւ, Հայաստանէն, Արցախէն, Ամերիկայի Միացեալ Նահանգներէն, հարաւային Ամերիկայէն, Հուլիցերիայէն, Ֆրանսայէն եւ Լիբանանէն պատմաբաններ, իրաւագետներ եւ քաղաքագետներ երկօրեայ նիստերով քննարկեցին «Հայկական Աշխարհը եւ Տարածաշրջանային Իրադարձութիւնները» թեմային առնչուած իրատապ օրակարգի կէտեր:

Փրոֆ. Աշոտ Մելքոնեան (Հայաստան), փրոֆ. Ռուբեն Սաֆրաստեան (Հայաստան), դոկտ. Արմեն Մարտիչեան (Հայաստան), դոկտ. Վահրամ Բալայեան (Արցախ), դոկտ. Հրայր Պալեան (Ա.Մ.Ն.), դոկտ. Խաչիկ Տեր Դուկասեան (Արժանիք), դոկտ. Վիգեն Չթրեան (Հուլիցերիա), Տիգրան Եկեանեան (Ֆրանսա), դոկտ. Նորա Պարագուարեան (Լիբանան), Շահան Գալստախարեան (Լիբանան) եւ Ահարոն Շիրտըմեան (Լիբանան - բարստուղար) յաջորդաբար քննարկեցին տարածաշրջանի նորագոյն իրադարձութիւնները, Ազրայեճանի իրադարձութիւնները, Ազրայեճանի գտման հետեւանքները, միջազգային իրաւական ատեաններու մօտ՝ ռազմագերիներու, ծերակալուածներու եւ պահուող անձանց վերադարձի հնարաւոր ուղիները արժարծելու, Ազրայեճանի գործադրած ռազմական յանցագործութիւններու թղթածրարի պատրաստութեան եւ հոգեւոր ու մշակութային ժառանգութեան պահպանման ծրագրի մշակման խնդիրները:

Խորհրդածողովը արձանագրեց.-

- 1) Միջազգային իրաւունքի մասնագետներ եւ ցեղասպանագետներ Արցախի հայաթափումը որակեցին ցեղասպանութիւն:
- 2) Ինչպէս 20-րդ դարու Մեծ Եղեռնը, Արցախի հայաթափումը տեղի ունեցաւ ի լուր անտարբեր մնացած միջազգային հանրութեան, ներառեալ Հայաստանի գործընկեր Ռուսիոյ:
- 3) Արցախի հարցը փակուած չէ. կարելի է լուր մնալ ոճիրին, անոր ուրացման եւ շարունակման վտանգին դէմ յանդիման:
- 4) Արցախի հարցով յանձնառութիւնը յանձնառութիւն է Հայաստանի հողային ամբողջականութեան, անկախութեան եւ ապա-

հովութեան:

5) Դեմ յանդիման ազգային գոյութեան կան սպառնալիքին, Հայրենի հայրութիւնն ու Սփիւռքը պարտին վերջ տալ ներքին պաշտպանութեան, ոյժերու ջլատման եւ կրատրականացման, համախմբուի ի խնդիր սպառնալիքի միասնական դիմակայման:

6) Նպատակաուղղուած աշխատանքներ ծրագրել դէպի հզօր Հայաստան եւ հզօր Սփիւռք՝ իբրեւ մէկ ամբողջութեան վերակայացում:

Խորհրդածողովը գործնական աշխատանքներու առումով որոշեց.

ա) 24 Ապրիլի 2024-ի Նախօրեակին Հայաստանի, Արցախի, Սփիւռքի եւ ոչ-հայ մասնագետներու մասնակցութեամբ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հովանաւորութեամբ, իրաւորել Արցախի դէմ իրագործուած ցեղասպանութեան եւ միջազգային դատական ատեաններու մօտ Ազրայեճանը պատասխանատուութեան կանչելու ուղիներուն նուիրուած միջազգային գիտածողով:

բ) Հրատարակութեան ձեռնարկել «Կիլիկիա Վերլուծական Հարթակ»ի 19-20 Յունուար 2024-ի խորհրդածողովի նիստերու ժողովածուն:

գ) «Արցախի նկատմամբ Ազրայեճանի կողմէ 2016-2023-ին կատարուած յանցագործութիւնները եւ անոնց հետեւանքները» հետազոտական ծրագրի շրջանակներուն մէջ համակողմանի վերլուծութեան ենթարկել յիշեալ ժամանակահատուածի ընթացքին Արցախի դէմ Ազրայեճանի իրագործած յանցագործութիւնները՝ նախանշելով անոնց դատապարտման եւ հետեւանքներու վերացման հնարաւոր մեթոտներն ու գործիքակազմերը:

դ) Պատրաստել Արցախի բռնագրաւուած տարածքներուն մէջ մշակութային ցեղասպանութեան ենթարկուած և անոր սպառնալիքին տակ գտնուող հոգեւոր-մշակութային ժառանգութեան արժէքներու ցանկը:

ե) Արամ Ա. Վեհափառ Հայրապետին եւ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի ճամբով կոչ ընել, որպէսզի անյապաղ ազատ արձակուին ռազմաքաղաքական առեւանգուած ղեկավարութիւնն ու ապօրինաբար պահուող ռազմագերիները:

Խորհրդածողովի մասնակիցները անհրաժեշտ նկատեցին հարթակի նիստեր գումարել հերթական յաճախականութեամբ, հետեւելու, քննարկելու եւ աշխատանքային ուղիներ ճշդելու համար Հայաստանի եւ հայութեան վերաբերեալ ամենէն իրատապ գործընթացներուն:»

22 ՀՈՒՆՎԱՐԻ 2024 Թ.

ՄՐՅՈՒՅՔԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Այոնիքի մարզի «Կապանի թիվ 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի Ֆիզկուլտուրայի /14 ժամ / ուսուցչի թափուր տեղի համար: Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՆ մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3X4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ/դիպլոմ,
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքուկի պատճենը (անկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների բաղադրումները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող

փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի բաղաբացիները՝ նաև զինվորական գրքուկ,
- իրատարաված հողավածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ(անկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ: Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ավարտը վերցնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024 թ. հունվարի 25-ից մինչև փետրվարի 7-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից: Մրցույթը տեղի կունենա փետրվարի 9-ին, ժամը 10:00-ին, ՀՀ Այոնիքի մարզի Կապանի թիվ 6 հիմնական դպրոցում. հասցեն՝ ք. Կապան Մ. Հարությունյանի փ. 5-Ա:

Տեղեկությունների համար զանգահարել 077782955 կամ 028553783:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՄԱՔԱՍ» ՄՊ ընկերությունում հաշվառված գյուղատնտեսական տեխնիկայի հետևյալ պետհամարակիցների՝ 15-97 ՏԼ, 18-65 ՏԼ, 51-48 ԱՄ, 04-65ԼՏ, 02-60 ԼՏ, 85-66 ՏԼ, 04-68 ԼՏ, 18-82 ԼՏ, 61-72 ՏԼ կորստի վերաբերյալ: Համարել անվավեր:

Այոնյաց երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՄՅՈՒՅՔԱՅ ԱՇՆԱՐԿ» ՍԱՀՄԱՆԱԲԱԿ ԴԱՏԱՍՏԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊՍԱԳՐՈՒՄ Ե 2003Թ. ՀՈՎՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:

Գլխավոր խմբագիր՝ ՍՍՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

- 3301, Այոնիքի մարզ, ք. Կապան, Ծառույց 20/32:
- (+374 91) 45 90 47
- (+374 77) 45 90 47
- syuniacyerkir@mail.ru
- www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Կրթությունը ներկայացնելու մեթոդագիտական վիճակում: «ԳՐԱԿՐԱՆ» – ԾԱՆՈՒԹՅՈՒՆ» բաժնում

Թերթը տպագրվում է «ԳԻՆՆ» ՏՊԱՐԱՆ ՄՊԸ-ում: Հասցեն՝ 0074, Երևան, Բագրատուրայաց փող., 70ա շենք Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաբանակը՝ 1010, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 30.01.2024թ.: